

կան էլ մարդիկ՝ մեր քաղաքների մէկի բնակիչների չափութեանի այդ մարդերից՝ կային նաև կանայք, բայց ոչ մեծ թուով, այլ այնքան փռքրաթիւ, ինչպէս մեզ ասուեց, որ հակառակ մեր հարեմական գրութեան, եթէ նրանց բաժանելու լինէին, հազիւ յիսուն տղամարդ կարող լլինէին մէկ կնոջ գերին դառնալ և կազմել նրա ընտանիքը:

Նաւում այնքան առատութիւն կար, որ կարծես թէ Սպահանի բազարը մեր առաջն էր: Մենք ամեն տեսակ պտուղներ ունէինք. այնքան էլ կաթ ու կարագ՝ որ կարծես թէ իւիաթների վրանները մեզ մօտ էին:

Այն տեսարանը որ մենք այստեղ տեսանք աւելի ապշեցրեց մեզ քան որևէ ուրիշ քան որ մենք տեսել էինք այն օրից՝ ինչ մենք մեր երկրից դուրս էինք եկել:

—Ա՛, ասացինք մենք, եթէ Շահը միայն մէկ հատ այսպէս նաւ ունենար Կասպից ծովում, նա բոլոր ուռաների հայրերը կայրէր:

—Ի՞նչալմհ, կրկնեցին բոլորը:

Մենք ապրում էինք այն յուսով որ երբ մեր գեսպանը մի անգամ կը հաստատուէր Անդլիայում, դժուար չէր լինի սովորել նաւաշինութիւնը, տեսնելով որ տաճիկները—այն ազգը՝ որին ամբողջ մարդկային ցեղն ընդունում է իրեւ էջեր, կարողանում էին շինել, և մէկ էլ յիշելով որ պարսիկները օժտուած են աւելի մեծ հանճարով և ընդունակութեամբ՝ քան ամբողջ մնացած աշխարհը միասին:

Նաւապետը յետոյ իր նայիրներին և պաշտօնեաներին ներկայացրեց գեսպանին նա առանձնապէս ներկայացրեց և մի քժիշկ, որին պատուիրուած էր ինսամք տանել մեր առողջութեանը, և մի ֆրանկ քահանայ՝ որ միակ կենդանի նշանն էր կրօնի, որ մենք տեսել էինք անհաւատների մէջ. որովհետև մենք դեռ ոչ մի ֆրանկ չէինք տեսել որ գոնէ հանդարտ կանգնած աղօթելիս լինէր:

Քահանան միւսներից տարբերուած էր իր սև զգեստով: Նրա երեսը գերծուած էր ճիշտ ինչպէս միւսներինը և նա անփոյթ կերպով զինի էր խմում: Բժիշկն էլ իմաստութեան ոչ մի որոշիչ նշան չունէր իր վրայ, բայց քաջայայտ էր որ նա գիտուն մարդ էր, որովհետև զարկերակս շօշափելով և լեզուիս նայելով՝ նա հարցրեց թէ արդեօք ես ցաւ չէի զգում զլիսիս այն տեղում որտեղ նա իր մատը դրեց, թէ արդեօք աչքերս չէին այրուում և թէ արդեօք ախորժակս չէր գնացել—զուշակութիւններ՝ որ միրզա Ահմադը չէր կարող անել մի ամբողջ

լուսնամում թէկուզ նրան օգնէին Պարսկաստանի բոլոր աստղագէտներն ու թալիսմանները:

Մանօթանալով այս խմբի հետ, մենք իջանք ներքեմ սենեակները որ աւելի ընդարձակ և շատ էին քան փոքր նաւինը և որոնց մէկում մենք տեսանք երեք հոգի—երկու մարդ և մէկ էին, որոնք անշուշտ աւելի բարձր գասակարդի անձինք էին քան նաւասահները Սրանց էլ ծանօթացը ինք դեսպանի հետ:

Տիկինը—որովհետև նա անկասկած խանում էր—զարմանալի գեղեցկութիւն ունէր—մի տեսակ գեղեցկութիւն՝ որ բուրովին տարբեր էր մեր երկրի կանանց գեղեցկութիւնից, որովհետև նա սիրուն էր, որպէս «ջահիլ լուսնեակ» և մազերը նման էին այն ոտկեթելին, որից Պարսկաստանում պատրաստում է հարսի գլխանոցը:

Նա չփորձեց իր երեսը ծածկել, երբ մենք և միւս մարդիկը նիրս մոռանք. քօզ էլ չունէր որ ծածկէր դէմքը եթէ կամենարք: Նա խօսեց գեսպանի հետ առանց շփոթուելու կամ քաշուելու և իսկոյն, ինչպէս հեշտ էր նկատել, գրաւեց նրա սիրտը, գերեց նրան բոլորովին:

Մէհմանդարի միջոցով՝ հետաքրքրուած՝ նա հարցրեց չէրքէզունու մասին և իր բարի ծառայութիւններն առաջարկեց նրա կացը նաւում հաճելի դարձնելու համար, սակայն դիսպանը հաւատացրեց, որ նա ոչ այլ ինչ է եթէ ոչ մի ստրկունի և որ, եթէ նա կարողանար մի անկիւն գտնել նստելու համար և ոչ ոք էլ չտեսնէր նրան, նա դրանից աւելի մեծ երջանկութեան կարիք չունէր:

Երկու մարդկերանց մէկը «ճանապարհի որդի» էր ինչպէս արաբները կոչում են ճանապարհորդին: Յայտնի էր որ նա փորձուած անձ էր, որովհետև նրա մազերը սպիտակ էին, թէկ նա կարող էր մարդկանց աշքից թաքուն պահել իր գլուխը մի չալմայով ծածկելով, ըստ արևելեան ճաշակի ու ձկի: Իր մասին արած պատմութիւնը մեզ համար անհասկանալի էր, որովհետև ինչպէս երևաց, նա շրջում էր ամբողջ աշխարհում և իր սեպհական ծախքով մի ֆրանկ թագաւորի համար ժողովում էր թռչուններ, զազաններ, ձկներ, որոնց նա մորթազերծ անելուց յետոյ յարդով լցնում էր:

Այն րոպէին երբ մեզ տեսաւ, սկսեց զննել մեզ ոտից մինչև գլուխ, կարծես թէ ձիեր և ուղտեր քննելիս լինէր, և երբ իմացանք թէ ինչ գործով էր պարապւում, այն ժամանակ միայն հասկացանք նրա հետաքրքրութեան պատճառը: Կասկած չկար որ նայելով մեզ վրայ որպէս օտար աշխարհի կենդանիների, նա տենչում էր մեր կաշին էլ բերթել ու յարդով լցնել:

Միւս մարդը, ինչպէս մեր մեհմանդարը նրան անուանում էր, մի շահզագէ (իշխան) էր, և բնիկ՝ Սիցիլիա կոչուած այն մեծ կղզու, որի մօտից անցնում էրնք, ինչպէս երեաց, նրա իշխանութիւնը կայանում էր նրանում, որ նա ապրանք էր բարձել նաւը Անգլիա տանելու և վաճառելու համար, նրա պատմութիւնն ինձ յիշցրեց այն վիճակը որին հասնում են մեր պարսից շահզադաները Շահի մահից յետոյ, այսինքն նրանք գառնում են թափառական բախտախնդիրներ երկրագնդիս վրայ:

Նրա ամձի վրայ քիչ բան կար որ ցոյց տար թէ նա ազնուական տոհից էր, որովհետեւ մինչև անգամ ֆրանկների մէջ էլ նա մի ժանառու մթին կերպարանքի տէր մարդ էր և սովորութիւն ունէր իր ձեռքերը տարօրինակ և անվայելուչ ձևով զետեղելու իր անդրավարտիքի գրպաններում—մի սովորութիւն, որ գուցէ իշխանական, բայց և այնպէս ոչ շնորհալի էր և ոչ վայելուչ Նրա հետևորդների թւում կար և մի բժիշկ, որին նա վարձել էր գուցէ իր տրամադրութիւնն ուրախ ու դուարթ պահելու, որովհետեւ նա մի որևէ լուրջ զբաղմունք չունենալով առաւօտից մինչև գիշեր նուագում էր իր կիթառի վրայ:

Այս խմբի ընկերակցութեամբ մենք շարունակեցինք մեր ծովային ճանապարհորդութիւնը: Նաև այնքան ընդարձակ էր, որ կարծես թէ բաժանուած էր զանազան մանալների (թաղերի) և հետևաբար մենք շատ չէինք կարողանում իրար հանդիպել ինչպէս անում էինք այն նաւում, որը մեզ բերել էր Զմիւնիայից: Ես գրեթէ երբէք չէի կարողանում ընկերակցել դեսպանին, բայց ճաշամիջոցներից (որովհետեւ նա ինձ թոյլ էր տալիս սեղանակից լինել իրան և նստել իր դիմաց) կամ եղբ նա զրօնում էր տախտակամածի վրայ. այդ պատճառով ես չեմ կարող առանձին արձանագրութիւն պահել նրա շարժումների մասին, բայց որովհետեւ ես ցանկութիւն ունէի Շահի պատուէրները կատարելու իսկոյն սկսեցի ուսումնասիրել անգլիերէն լեզուն և որքան կարողացայ՝ բարեկամացայ շատ անհաւատների հետ, որպէսզի նրանցից սովորէի իմ տեսած ամեն բաների անունները:

Ես տեսայ որ ոչ ոք չէր զլանում տեղեկութիւններ տալ ինձ, և շուտով սկսեցի միտքս հասկացնելու չափ անգլիերէն խօսել: Դեսպանն էլ մեծ օգնութիւն էր ստանում իր ուսումնասիրութեան մէջ, նաևում գտնուող բոլոր մարդերից, մասնաւրապէս նաւապետի տեղապահներից մէկից, որի հետ նա մըտերմացել էր և որը նրա համար կազմեց հարկաւոր բառերի,

մի տետր և այսպէս մենք լաւ, օգտակար ժամանակ անցկացը-  
րինք նաւում:

Միրզա Ֆիրուզը, բացի գրանցից, իր ուսման մեծ մասը  
ստանում էր լուսներես խանումից, որը զարմանալի բան,  
այնքան ուսեալ էր ինչքան մի դպիր, որովհետև նա ոչ միայն  
կարողանում էր կարդալ, այլ իր կարդացածն էլ հասկանում  
էր <sup>1)</sup>: Նա գրում էր նաև եւրոպական ձևով, բայց թէ արդեօք  
գերազանցում էր այդ բանում, չենք կարող ասել, որովհետև  
մեր գեղագրութեան միայն ծանօթ էինք, չէինք կարո-  
ղանում զատել թէ որն էր լաւ գրութիւնը փրանկների մէջ:

Խսկապէս հազո՞ւադէպ և հետաքրքիր տեսարան էր տես-  
նել, թէ այդ գեղանի արարածը ի՞նչպէս էր կարողանում մի  
մոլլաի բոլոր գործերը կատարել վերահսկելով դեսպանի  
մատներին, երբ նա փորձում էր գրել և սովորեցնելով նրան  
կարդալ այն այլանդակ, խեցգետնի ճանկերի պէս անձոռնի  
տառերը, որ սովորաբար հանդիպում ենք եւրոպական գրքե-  
րի մէջ:

Իմ կողմից, ես ամենկին չկարողացայ թողնել աշխց դէպի  
ձախ կողմ կարդալու սովորութիւնը որովհետև այնքան թիւր  
ու անկարգ են եւրոպացիները որ նրանց ամեն մի գիր-  
քը գրուած է ձախից դէպի աջ և այդ դժուարութիւնն ա-  
մեն օր վերսկսւում էր երբ ես սկսում էի կարդալ. մինչև վեր-  
ջը ստիպուեցի մի գնդասեղ անցկացնել իմ ձախ թեկիս թեզա-  
նիքի մէջ, որպէս յիշեցնող:

Մոհամէդ բէկը խորապէս մտածելով այս խնդրի վրայ և  
քննութեան ենթարկելով այսպիսի հակասական սովորութիւնը,  
այն եղրակացութեան եկաւ թէ՝ այն բոլոր մարդիկը որ  
գետնի վրայ են նստում, ինչպէս պարսիկները, տաճիկներին  
ու արաբները աշխց դէպի ձախ են գրում, իսկ այն բոլորը,  
որոնք գործ են ածում սեղաններ և աթոռներ, ինչպէս եւրո-  
պացիները՝ գրիչը հակառակ ուղղութեամբ են շարժում:

Ես գեռ պիտի վերապահեմ իմ նշանական կեանքի զանազան սովորութիւնների մասին—սովորութիւններ,  
որ բոլորովին հակառակ են մերին—մինչև որ աւելի շատ բան տես-  
նեմ այդ արտակարգ ժողովրդից. բայց ես չեմ կարող չյիշել  
որ ամենամեծ դժուարութիւններից մէկը, որի դէմ մենք սկըզ-  
բում պարտաւորուեցինք կոտել՝ այդ ուտելու ձեմ ու սովորու-  
թիւնն էր:

1) Պարսիկները ասքքերութիւն են դնում նրանց մէջ, որոնք կարդում  
և հասկանում են, և նրանց մէջ, որոնք կարդում, բայց չեն հասկանում:

Երբ մտաբերում էինք մեր ձևերի պարզութիւնը սեղանի վրայ, ուր, սփռոցի վրայ տեսնուում է միայն կերակուրը՝ զարազան մեծութեամբ անօթների և ափսէների մէջ գրուած նաև զանազան գդալներ հեղուկների համար՝ ոչ ոք չի զարմանալ, երբ ասեմ որ, բոլորովին շփնթւում էինք երբ տեսնում էինք այն բոլորը, որ անգլիացիք գործ են ածում իրանց սեղանի վրայ—սեղան՝ որ ծածկուած է յանցաւորին պատժելու գործիք-ներով:

Սեղանի վրայ կային ամեն մեծութեամբ և ամեն տեսակի փայլուն շեղբերը ունեցող դանակներ, որոնք իրանց թուով բաւական էին զարդարելու նահի տնեցւոց բոլորի գոտիները:<sup>1)</sup> Կային նաև պէսպէս երկաթէ ճանկեր, <sup>2)</sup> որոնք նմանում էին տանջանաց գործիքների՝ աչքեր հանելու կամ մեղապարաների մարմինները ծածկելու համար։ Սրանց վրայ աւելացրուած էին ազգաններ, ձուկ կտրելու գործիքներ, սկոոպներ (scoops) և ամեն ձևի գդալներ, նաև այնքան բազմաթիւ մեքենաններ, որոնց գործածութիւնը մարդ հազիւ իր ամբողջ կեանքում կարող է սովորել, և այդ բոլորն ի՞նչի համար—միայն կերակուրը ափսէից բերանը փոխադրելու համար։

Պիտի երևակայել, որ մենք շատ անշնորք էին, երբ առաջին անգամ սկսեցինք այս նոր ձևով կերակրուել—մենք՝ որ մասկութիւնից սովորել էինք ամեն բան միայն մատներով վերցնել և հանգիստ ու ապահով կերպով բերաններս դնել առանց սուր գործիքների վտանգաւոր մասնակցութեանը։

Միրզա Ֆիրուզը հէնց սկիզբից վճռեց յարատևել, և այդպէս էլ արեցի ես, որպէս զի ազատուէինք ամեն օր անհաւատների ծաղրի առարկան դառնալու մահացումից, որովհետեւ նրանք կարծես թէ միշտ ծաղրում էին մեզ, երբ մեր սովորութիւնների մէջ նկատում էին մի բան որ հակառակ էր իրանց սովորութեանը։

Մեր առաջին փորձերն աղետալի էին, որովհետեւ իմ իշխանաւորը գանակն իր ձեռքում բռնելիս՝ գրեթէ կտրեց, բաժանեց իր մատների մէկը, և ես էլ, մոռանալով որ միւս ձեռքումս մի ճանկ ունիմ և մի բոպէ մատներովս ուտելով ինչպէս իմ սովորութիւնս էր, սոսկալի գործիքը երեսիս խփեցի և քիչ մնաց որ աչքս հանէի։

Ցետոյ անվերջ ձևեր կային, որոնց կարիքը մենք չէինք

<sup>1)</sup> Դրեթէ ընդհանուր սովորութիւն է Պարսկաստանում գոտու մէջ դանակ կամ գաշոյն խըելը։

<sup>2)</sup> Պարսիկները պատառաքաղին չանգալ (ճանկ) են ասում։

կարողանում ըմբռնել։ Վայելուչ սովորութիւնն էր որ մեծ ավազների մէջ դրուած կերակուրը նախ բան ուղղակի բերան մտնելը, մի շեղում գործէր և դրուէր փոքրիկ պնակների մէջ՝ որ զետեղուած են լինում իւրաքանչյուր հիւրի առաջ. բացի դրանից, օրինաւոր բան չէր խմել ուղղակի որուակից, այլ խմէչը նախ պիտի ածուէր օժանդակ բաժակների մէջ, ապա խմուէր. ամեն մի տեսակ կերակուրն էլ իր առանձին գտալով պիտի ուտուէր։

Անվայելուչ և անկարգ բան է կարագ ուտել, արգանակ խմելու գդալով՝ կամ արգանակ խմել՝ կարագի շերեփով։ Մի ամբողջ եփած հաւ ձեռքում վերցնելը մահացաւ մեղք է, և աւելի մեծ մեղք է դրա մի կտորը հրամցնել սեղանակցիկ, ինչ որ մեզ մօտ շատ բարձր պատիւ է համարւում։

Վերջապէս մեր տեսած բոլոր նորութիւնները նկարագրելու համար հարկաւոր է աւելի մեծ համբերութիւն՝ բանայնքանը որ ունիմ ես Մարգարէի անարժան ծառաս. ուստի ես վճռեցի այս նիւթի վրայ իմ արած դիտողութիւններս գեռ յիշողութեանս մէջ պահել, որպէս զի նրանց դուրս բերեմ, ինշալլա այն ժամանակ՝ երբ ճակատագիրը մեզ կրկին ողջամբ կը հասցնի մեր երկիրն ու մեր տները։

### ԴԼ. ԺԳ.

Դեսպանութիւնը մենակում է Մալտայից, անցնում է Զիքրալտար նեղուցից եւ տեսնում է Անդիան։ — Հաջի Բաբան նկարագրում է մի քանի տեսարաններ նաև վրայ։

Դէրվիշների կղզուց մեր հեռանալու առաւօտը, երբ մենք զարթնեցինք և նաւի տախտակամածից նայեցենք մեր շուրջը, խիստ զարմացանք, տեսնելով ծովը որքան մեր աշքերը կարողանում էին գօրել, ծածկուած ամեն մեծութեան նաւերով, որոնց բոլորին էլ կարծես մէկ միտք, մէկ մարդ, նոյն ուղղութեամբը յառաջ էր մղում, թէպէտ մենք ոչ մի տեսանելի նշան չէինք գտնում երկներում, որով նրանք առաջնորդուելիս լինէին։

Այդ անհասկանալի հանգամանքը բացատրուեց, երբ մենք տեսանք որ ֆրանկներն էլ մեզ պէս դէրլէ<sup>1)</sup> ունէին, և որ նրանք առաջնորդում էին դէպի այդ կողմը մի գործիքի մի-

1) Մէկկայի կողմը։

Հոցով, որը մինչև մի աստիճան մեր դէրլէ նմայի<sup>1)</sup> գործն է անում, որով Ալլահի օրհնութեամբ, ամեն մի ճշմարիտ հաւատացեալ կարող է ուղիղ կողմը գտնել դէպի Մէկկա:

Այդ նաւերը տեսնելով՝ մենք սկզբում կարծեցինք թէ գուցէ գրանք միասին կաղմում էին Սնգլիայի մի մասը և թէ գուցէ ծովային այս կալուածքը կամ տէրութիւնն էլ հէնց այն է որի մասին անհաւատները Պարսկաստանում պարծանքով խօսում էին, որպէս իրանցը: Բայց մենք կրկին սխալուած էինք, որովհետև, որքան զարմացանք, երբ տեսանք որ այդ նաւերը բեռնաւորուած էին ապրանքներով՝ Անգլիա տանելու համար, և որ այն մեծ նաւը որի մէջ էինք, նշանակուած էր պաշտպանելու նրանց մեր ծովային ճանապարհորդութեան միջոցին:

— Բայց, ասաց դեսպանը, յանուն Ալլահի, միթէ սով կայ ձեր երկրում, որ այս բոլոր նաւերը գնում են այնտեղ, կամ միթէ անգլիացիք այնպիսի անմիտ, ապուշ մարդիկ են որ իրանց համար ոչինչ չեն կարողանում շինել և որ օտար ազգերն են պարտաւոր նրանց մատակարարելու ամեն բան: Իսկապէս երբ մէկ նաև Ռուսաստանից Ռաշտ է հասնում և մէկ ուրիշն էլ Հնդկաստանից Աբուշիր՝ ամբողջ երկրում դրա մասին խօսում է որպէս մի դիպուածի մասին, և նրանք մեզ համար բերում են այնքան ճոթ, շաքար, սուրճ, լեղակ և ուրիշ այլեւայլ ապրանքներ՝ որքան բաւական կը լինին շատ ամիսների համար:

Մէհմանգարը փոխանակ վշտանալու որ իր-երկիրը այդքան կարօտութեան մէջ էր և այնքան կարիք ունէր նաւերի և ապրանքների, կարծես թէ, ընդհակառակը փառք ու պատիւ զգաց և աշխատեց մեզ համոզել որ, իսկապէս այդ ցոյց էր տալիս իր երկրի հարստութիւնն ու աջողութիւնը:

Մենք աւելի ու աւելի շփոթուում էինք, երբ տեսնում էինք այդ բոլոր բաները և մեր անհամբերութիւնը այդ արտակարգ ժողովրդի երկիրը համանելու համար՝ աւելի և աւելի շատանում էր: Մեր ժամանակը, (ինչպէս մեզ թուում էր) անցնում էր մի բանի ազգեցութեան տակ՝ որ աւելի վեր էր քան մարդու: Օրերով ու շաբաթներով մենք կենում էինք մի ջրային աշխարհի մէջ տեղում և գնում էինք, Ալլահը գիտէ, թէ ուրի: Մենք ապրում էինք մի-երկու մարդկանց հաւաստիացութիւններով: Նրանք բացի մի քանի նկարներից, խզմզանքներից և նշաններից, որ գծուած էին թղթի մեծ թերթերի վրայ, ոչ մի ուրիշ ապացոյց չունէին մեզ ցոյց տալու թէ մենք կրկին կը տեսնէինք

1) Մի կողմացոյց—գործիք՝ որով ստուգում է Մէկկայի կողմը:

մարդկային էակներ և թէ մի անգամ ևա կը վայելէինք երկրի վրայ ապրելու երանութիւնը:

Սրանցով, նրանք կեղծում էին բացատրել, որ իբր թէ երկրը կը է, որ դրա վրայից անցնում են որոշ գծեր, որոնց մի քանիսի վրայից անցնելուց յետոյ, ունք մի առաւու մեզ անպատճառ Անդիմայում կը գտնէինք:

Ել լై կարող էինք անել, եթէ ոչ հաւատալ նրանց ասածներին:

Նրանց վարդապետութիւնը աւելի տարօրինակ և ապշեցուցիչ էր քան որ և է ուրիշ վարդապետութիւն, որ մենք լսել էինք մեր ամենակորովամիտ մոլլաներից. մենք վճռեցինք, որ եթէ նրանց հաշիւները ուղիղ դուրս գային, հարատարակէինք մեր երկրում, ու նրանց համարէինք այնպիսի մարդարէներ ու աստեղագէտներ՝ որոնց նմանը չէին երևացել Զէմշղիդի օրից:

Շատ ցերեկներ ու գիշերներ նաւելուց յետոյ, ցամաքը վերջապէս երևաց: Մենք խարիսխ ձգեցինք մի մեծ մեկուսացած ժայռի մօտ, որին անդիմապարը մեղ հետ խօսելիս՝ հաւատացրեց որ դա մի անգամ պատկանելիս է եղել իսլամի որդիներին Նա ցոյց տուեց մեզանից հեռու, հակառակ ափում ընկած ցամաքի մի երկար շարք, որտեղ, նրա ասելով, բնակւում էին մահմեդականներ:

Երբ ստիպեցինք նրան մեզ աւելի տեղեկութիւններ տալ այդտեղի մասին, նա ասաց որ Թարէք թէն Զէյեադ անունով մէկը—մի համբաւաւոր ահէնլիսոր<sup>1)</sup> որը մի զօրբապետ էր մեր նախնի խալիֆների մէկի օրով գրաւել էր այդ տեղերը այն ժամանակուայ անհաւատների ձեռքից և նրա անունով այդ տեղը կոչուել էր Զիբէլ թարէքի կամ Թարէքի լեռն:

Այս պատմութիւնը լսելով մենք վեր ոլորեցինք մեր ըեխերը, և իսկոյն աշխատեցինք մուսուլմանների զօրութեան մասին աւելի լայն ու տպաւորիչ գաղափար տալ նաւում գըտնուող մեր բարեկամներին:

Երկին մենք նաւեցինք, բայց հակառակ քամու պատճառով երկար ժամանակ անցնում էինք մի ներ անցքով, որը մեր յէշողութեան մէջ ըերեց Բարէլ Մանդէրը<sup>2)</sup> որ տանում

1) Ահէնլիսոր նշանակում է երկաթ ուտող. հերոսներին սովորաբար Ահէնլիսոր են ասում:

2) Այս բառը արաբերէն «արտասուրքի գուռ» է նշանակում. արաբ-ները մեռած էին համարում նըանց՝ որոնք վստահանում էին այդ նեղուցից անցնելու վտանգին հանդիպել:

է դէպի սուրբ Մէկկա, և մենք «Արտասուքի դրան մուտք» կոչեցինք մեր ծովային ճանապարհորդութեան այս տեղը:

Այս նեղուցից անցնելով, մենք շարունակեցինք մեր ընթացքը և շատ օրեր գնում էինք աւելի սառն եղանակում՝ երբ մի հանգանանք տեղի ունեցաւ որ մեզ ներշնչեց այն յոյսը, թէ մեր ճանապարհորդութիւնը իր վախճանին հասնելու մատ էր:

«Դազանի և թռչունի կաշին լցնող» ճանապարհորդը, որի հետ մենք շատ մտերմացել էինք, յայտնապէս թշուառ էր զգում իրան. Նրա թշուառութեան պատճառը իր տարիքի աներկդիմի նշանն էր—այսինքն իր սպիտակ մազերը:

Իր գլխի մազերը համեմատելով մեր մօրուքների հետ, նա հետաքրքրուեց իմանալ թէ ինչ հնացքով էր որ մենք՝ ծերու երիտասարդ, կարողանում էինք այդպէս փայլուն սկութեամբ պահել միշտ մեր մազերը, մինչդեռ ինքն ինչ էլ որ անում էր՝ չէր կարողանում արգելք դառնալ իր մազերի սպիտականալուն:

Նա մեզ հասկացրեց, որ ընդհանուր աշխարհը իր մազերի սպիտակլութեանը նայելով՝ իրան աւելի ծեր էր համարում քան իսկապէս էր. մինչդեռ նա հաւատացրեց մեզ որ ինքը դեռ երիտասարդութեան առողջ ու թարմ հասակում էր, նա ասում էր, որ եթէ կարողանար որևէ արհեստական միջոցով ի բաց դարձնել այդպիսի անարդարութիւն՝ զգում էր որ իրաւունք ունէր այդպէս անելու:

Մենք հաւատացրինք նրան, որ Պարսկաստանում մեզ էլ նոյնպէս ազգում է տարիքը, որ մենք էլ ասում ենք սպիտակ մազերը, և որ այդ պատճառով, անյիշելի ժամանակից սկսած՝ մենք գործ ենք ածել որոշ ներկեր, որոնց միջոցով ծերերի մօրուքները նոյն տեսքն են ստանում ինչպէս երիտասարդներինք, Մենք ասացինք նաև, որ մեր մէջ ոմանք գերազասում են լոկ հինայի գործածութիւնը որը մի գեղեցիկ կարմիր կամ նարնջի գոյն է տալիս, և ոմանք էլ՝ ճաշակով աւելի դժուարահաճ՝ գերազասում են մինակ լեզակի տերեւը որ կապոյտ գոյն է տալիս. սակայն ընդհանրութիւնը այս ներկերի երկուսն էլ խառն է գործ ածում, որից դուրս է գալիս սիրուն փայլուն սև գոյն: Յետոյ հարցրինք ճանապարհորդից թէ ինքը ո՞րն էր մտածում գործածել—կարմիրը, կապիյաը, թէ սկը:

Նա կարծես սոսկումից ցնցուեց, երբ լսեց կարմիր գոյնի մասին, և երդուեց որ ինքը կը գերազասէր իր սպիտակ մազերը. բայց յետոյ ցանկութիւն յայտնեց սև ներկը գործածելու, միայն թէ, ինչպէս երևաց, ուզում էր իր հայրենակիցնե-

րից գաղտնի պահել, որպէսզի իր հայրենի ափերը հասնելիս,  
երևար երիտասարդութեան բոլոր գոյնովը:

Հաշէմը—ղետպանի սենեկապետը—խոստացաւ պատրաս-  
տել հարկաւոր եղած ներկերը՝ նորոգելու համար այս անհաւատի  
գլխի մազերը, բայց որքան զարմացանք, երբ, հետեւալ ա-  
ռաւոտը, փոխանակ նրան նոր գոյնով տեսնելու, տեսանք որ  
նրա գլուխը ծեփուած էր ճարպով. և ճարպը ծածկուած էր  
այն սպիտակ փոշովը, որը գործ են ածում ֆրակները. Մենք  
կարողացանք լաւ տեսնել որ հինան լաւ ծծուել էր նրա մա-  
զերի մէջ, և որ, եթէ նա իր գլուխը սպիտակ փոշով կամ  
ճարպով պատրած լինէր՝ նրա մազերը կրակի գոյն կունենա-  
յին. Երբ մենք Հաշէմից հարցրինք թէ ինչն չէր ներկել լե-  
ղակի աերևով, որով քուրովին սկացրած կը լինէր. բայց  
բանից գուրս եկաւ, որ ներկի նիւթը ծովի խոնաւութիւնից  
կորցրել էր իր յատկութիւնը, և հետևապէս «թռչունի կաշին  
լցնողի» դլուխը դատապարտուել էր սերտ կարմիր մնալու

Պարզ էր որ այս աղէտը նրա համար սաստիկ մահա-  
ցուցիչ էր, քանի որ նա տեսնում էր որ իր երկրում, կարմիր  
մազը շատ խայտառակ, անարդ գոյն<sup>1)</sup> էր համարւում. մէկ էլ  
որ նա այդ գոյնով էր երևում խանումի առաջ, որի աշքում նա.  
յայտնի էր, ցանկանում էր բարձր դիրք ունենալ: Սակայն  
բարեբախտութիւն էր թէ նրա և թէ մեղ համար, որ Անգլիան  
պիտի շուտով տեսնուէր. և այդ նոր ու հետաքրքիր երկրի  
հնապատկերը մոռացրեց մեր ուղեկցի թշուաւութիւնը, նրա  
կարմիր մազերի ծաղը:

Անհաւատները, ինչպէս երևաց, ողջունեցին իրանց երկրի  
առաջին տեսքը գրեթէ նոյնքան հրճուանքով որքան մենք, և  
այս հանգամանքը հաստատեց մեր այն ենթաղբութիւնը թէ,  
դիպուածն ու ճակատագիրը շատ աւելի մեծ դեր էին կատա-  
րում մեր այնտեղ ընկնելու գործի մէջ, քան այն դիտողու-  
թիւնները, գծերը, երկրաչափական անկիւնները և աստե-  
ղագէտների մեծաթերթ թղթերը, որոնց հետ ծանօթացել էինք:

Թաջայայտ էր, որ նրանց դիտողութիւնները (և այդ  
մի յայտնութիւն էր որ մեծ հրճուանքով ամենից առաջ  
արել էր Մոհամէդ բէգը) բոլորովին կախուած չէին նրանց՝  
երկնային երկրների մասին ունեցած գիտութիւնից, որով  
հետեւ ծովը ձգելով երկար պարանի ծայրին կապուածմի կտոր

1) Այս դարու սկզբներում—այն օրից որ այս գիրքը գրուել է կար-  
մրամերմակ և ուրիշ կարմրագոյն մազերը մոշա են դարձել մանտանդ  
կանանց մէջ:

արճին՝ նրանք տեսան որ մենք մօտ էինք ցամաքին, և ծովի յատակը՝ այսինքն խորութիւնը չափելով իմացան արճին կպած ցեխի տեսակից՝ որ դա պատկանում էր Անգլիային:

Խաւար ու տիսուր Անգլիայի մասին մեր լսած բաներից մեծ մասը ճշմարիտ էր, որովհետև սկզբում երբ մեղցոյց տուին նրա ծովափը, մենք, փոխանակ տեսնելու այնպիսի պայծառ ու արեւափայլ լեռներ, որոնց մեր աջքերը սովոր էին մեր երկրում, տեսանք մի ցած գիծ, որ ընկած էր հորիզոնի շուրջը՝ ծածկուած ամպերով ու գոլորշիներով. դա էր ֆրանկների երկիրը:

Յետոյ մեր համար իսկոյն բացայաց եղաւ այն ինչ որ ցարդ անհասկանալի էր, այսինքն թէ ինչու այս անհանգիստ մարդիկը պիտի թողնէին իրանց տները, հեռանային իրանց հայրենիքից և իրանց գցէին այդքան վտանգների և դժուարութիւնների մէջ:

Մենք մէկ յարմարութիւն ունէինք, որ նրանք չունէին և առանց որին մարդուս կեանքը քիչ արժէք ունի: Այդ այն էր, որ մենք տեսնում էինք և վայելում էինք արել, և նրանք բաւական խելօք էին հասկանալով որ, այդ բարիքը աւելի մեծ, աւելի թանկ էր, քան որևէ ուրիշ բարիք:

Ճիշտ է, մէհմանդարը աշխատում էր ուրիշ կերպ բացատրել ասելով, որ եւրոպական ազգերի մէջ այնպիսի շահեր գոյութիւն ունին, որոնց մասին գաղափար անգամ չունէինք—շահեր՝ որոնց պատճառով այդ ազգերի գլխաւորներից մէկը՝ Անգլիան պտրտաւոր է պատգամաւորներ ուղարկել աշխարհի բոլոր կողմերը—որչափ էլ որ իր անմիջական շրջանից հեռու լինի—բարեկամութիւն հաստատելու և իր վաճառականութիւնն ընդուրձակելու համար:

Մենք, ոչ մի կերպ չէինք ընդունում այս պատճառաբանութիւնը, ոչ էլ ընդունում էինք թէ, որևէ շահ՝ որ ֆրանկները ունէին, կարող էր մրցել այն շահերի հետ, որ շարժում, յուզում էր մեր լայնատարած, կարևոր և հին թագաւորութիւնը:—Օրինակի համար, ասաց Միրզա Ֆիրուզը մէհմանդարին, եթէ գուշ խօսէք արտաքին յարաբերութիւնների մասին, լինչը կարող է համեմատուել մեր չափովների<sup>1)</sup> մէկի հետ, որ կատարում է մի հարեան նահանգի վրայ: Այն բոլոր կին ու մարդ ստրուկները, ուղտերը, ծիերը, մատակները, ոչխարները, ինչպէս և ջորաբեռ զլուիները որ մենք յաղթութեամբ յափշտակում ենք ու տանում այդպիսի դէպքերում, իսկապէս քաջագործութիւններ են, և երբէք չեն կարող համեմատուել մի քանի անմօրուք անհաւատների վէճերի և կոփիների հետ, որոնք գրում, բանակ-

1) Աւազակային արշաւանք ալան-թալան:

ցում, խօսում են, երբեմն էլ ամիսներով ու տարիներով շատ բառեր գործածում մի որևէ բանի իրաւունքի մասին՝ նախ քան հարուածների գալը, եւ եթէ զուք խօսում էք ընտանեկան գործերի մասին, ինչ են այն անհատների մանր շահերը, (որոնք գործում են միմիայն իրանց վայելչութիւնների համար) որ համեմատուեն մի ամբողջ ազգի աշխատութիւնների և ճիգերի հետ,—մի ազգի որ ճիգ է թափում, շառացնել վայելքներ ու հարստութիւն մի մեծ թագաւորի համար ինչպէս մերը, որը, փոխանակ շնորհակալ լինելու մեր կրած նեղութիւնների համար, մեծ պատիւ է արած համարում երբ ընդունում է մեր նոուիրաբերութիւնները և մեր կեանքի ու կայքի հարկատութիւնը:

Մենք զուր էինք վիճաբանում, որովհետև ոչ մի կերպով չէինք կարողանում մէհմանդարին համոզել, որ իր երկիրը և իր կառավարութիւնը ամենալաւը չէին աշխարհում. նա միշտ իր խօսքը վերջացնելով ասում էր.

— Սպասեցէք մինչև տեսնէք Անգլիան. դուք յետոյ կը դատէք ձեր աշքով և կ'ասէք ինձ թէ մըն է ամենաերջանիկ ժողովուրդը—անգլիացիները, թէ պարսիկները.

Դլ. Ժդ.

Նրանք հասնում են Պլիմոթ;—Նրանց առաջին տպաւորութիւնները, երբ տեսնում են մի անզլիական քաղաք;—Հոտ՛վի եւ քարքանսարակի տարբերութիւնը;

Վերջապէս մերնաւը խարիսխ ձգեց, և ոչ ոք չետաքրքրուեց, աչ ոք կարծես փոյթ չարեց ստուգելու թէ արդեօք ժամը բարեյաջնող էր խարիսխ ձգելու համար թէ չէ, և առանց մի բոպէի խորհրդածութեան նետուեց խարիսխը և մեր վիճակը որոշուեց:

Բայց նախ քան մեր ծովափին մերձենալը, մենք հաղորդակցութիւն ունեցանք ցամաքի բնակիչների հետ որոշ դրօշակ ների միջոցով, որ բարձրացրուած էին կայմերի վրայ: Նաւապետը հաւաստիացրեց դեսպանին, որ մեր ժամանումը մի քանի ժամուայ մէջ կը յայտարարուէր Անգլիայի թագաւորին, չնայած որ մայրաքաղաքը առ նուազն այնքան հեռու էր նաւահանգստից, որքան թէնրանը Սպահանից:

Այս հնարքը մեզ շատ սքանչացրեց. բայց մենք շատ քիչ էինք հասկանում թէ դա ի՞նչպէս էր կատարում, չնայած որ Մահմէդ բէզը մեզ հաւաստացնում էր որ իբր թէ անգլիացիք սկզբում սովորել էին այդ պարսիկներից, որովհետև նա յիշեցըց մեր էին պատմութեան այն մասը, որ վերաբերում էրը-

Նակալ Զոհաղի անկմանը, ասելով որ այդ դէպքը (անկումը) պատահեց նրանով, որ լեռների գլխներին կրակներ վառուեցին, ուրոնք ծառայեցին որպէս նշան ժողովրդի ընդհանուր յարձակման և նրա (Զոհաղի) մահուան:

Ինչևէ, մենք շուտով տեսանք այդ հնարքի օգուտը, որով հետև փոխանակ պարտաւորուելու քառասուն օր նաւում մնալ, ինչպէս մեզ սրանից առաջ սպառնացել էին, երկու ժամ չանցած՝ մեր տուած նշանների պատասխանը ստացուեց և մեզ կատարեալ իրաւունք տրուեց ցամաք իջնել և գնալ անգլիական մայրաքաղաքը:

Սա իրաւ, երջանիկ օր էր մեզ համար: Մինչև անգամ առանց մեր աստեղագէտի թոյլաւութիւնը խնդրել մտածելու, դեսպանը խկոյն վճռեց իջնել նաւից: Նա հրամայեց իր հետեւորդներին պատրաստուել մեր ուղևորութեան համար, հաւաքել մեր բեռները և չմոռանալ թամբերը, սանձերը և ձիերին վերաբերեալ իրերը:

Մենք սիրով բաժանուեցինք: Ատրճանակները մեր գօտիներում, թրերը մեր կողերին կախ արած և իրաքանչիւրիս ուսին մի նիզակ կամ հրացան՝ մենք համարձակ կերպով իջանք նաւից և մտանք մեզ համար պատրաստուած նաւալիների մէջ:

Մենք սիրով բաժանուեցինք մեր նաւի միջի բարեկամներից, որովհետև թէպէտ նրանց գործը կռուել, զարկել ու զարկուելն էր՝ այնուամենայնիւ նրանք խաղաղութեամբ և բարեացակամութեամբ էին վերաբերում դէպի մեզ:

Կարմրահեր ուղևորը դեսպանի պաշտպանութեան ներքոյ ափ իջաւ, և մենք, վերջապէս, ընկերակցութեամբ մեր թարգմանչի, որն այժմ մեր մէհմանդարն էր եղել՝ հեռացանք նաւիցը, մինչդեռ միւնոյն ժամանակ օդը թնդացրին մի քանի թնդանօթներ՝ դէպքը յայտարարելու համար:

Չէրքէզուհին, որն իր անկինից չէր շարժուել նաւը մտած ժամանակակից ի վեր, այժմ Մահրուրի և Սէյիդի առաջնորդութեամբ ցամաք իջաւ մի առանձին նաւակով դեսպանի մեկնելուց յետոյ:

Այն կարճ ժամանակամիջոցում որ մենք եղել էինք եւրոպացիների մէջ, մենք մի տարբերութիւն նկատեցինք մեր և նրանց մէջ—տարբերութիւն՝ որ մեզ շատ զարմացրեց: Այդ այն յարգանքն ու պատիւն էր որ նրանք տալիս էին կանանց: Նրանք պաշտում էին ոսկեհեր խանըմին, որ իրանց ուղեկիցն էր եղել: Նրա երևալուն պէս, ամեն մարդ կանգնեց, և ոչ ոք կարծես չէր մտածում իր կամ ուրիշի մասին, մինչև որ նա նստի ամենայարմար և ամենահանգիստ ձևով: Եթէ նա գնում էր

նաւի տախտակամածի վրայ, այնտեղի պաշտօնեաները կամ մարդիկը ոչինչ չէին խնայում նրա հանգստութեան ու յար- մարութեան համար. նոյնքան ուշագրութեան ու խնամքի կարող էր արժանանալ և Դիլֆարիբը, եթէ նա էլ իրան այդ խանըմի պէս պահէր ու ցոյց տար, թէն մինչեւ անգամ նրա առանձնա- կեցութեան մէջ էլ, ոչ մի օր չէր անցնում որ նրա մասին չհետաքրքրուէին, թէ արդեօք ամեն բան նրա ցանկութեան համեմատ էր, թէ արդեօք նրա համար պատրաստուած կերա- կուրը նրա ճաշակին յարմար էր, և թէ արդեօք էլ ի՞նչ կա- րելի է անել նրան, աւելի երջանիկ պահելու համար:

Սյս դիտողութիմները հաստատուեցին այն կարճ ժամա- նակամիջոցում որ մենք նաւումն էինք եղել, նախ բան մեր Պը- լիմըթ ժամանելը, որովհետև հէնց որ նաւի խարիսխը վայր իջաւ խակոյն կանայք նաւակներով մօտեցան նաւին և նրանց թոյլ տրուեց տախտակամածի վրայ բարձրանալ: Այդ կանայքը, ճշմարիտ է, թէպէտ ամենազեղեցիկներից չէին, ոչ էլ ազնուա- զորմ, այնուամենայնիւ մարդիկ պատշաճ քաղաքավարութեամբ էին վերաբերում դէպի նրանց:

Սապէին ասում է, — «Ի՞նչքան որ պտուղն արգելում է՝ այնքան ցանկալի է դառնում»: Եւ այդպէս էլ եղաւ չէրքէցու- հու առանձնակեցութեան դէպքում, որովհետև այն բոպէին, երբ նա երկաց՝ գրեթէ անթափանցելիօրէն ծածկուած՝ նաւի բոլոր մարդիկը պատրաստ սպասում էին նայելու, տեսնելու նրան: Լաւ էր որ դեսպանը վկայ չեղաւ այս տեսարանին, ա- պա թէ ոչ նրա բոլոր զայրոյթը կը գրգռուէր և նա որ այժմ թագաւորի ներկայացուցիչն էր համարում իրան, գուցէ նոյն պատիւը պահանջէր իր սարուկուու համար, որպիսին տիե- զերքի ապաւէնը պահանջում է իր կանանց համար, երբ նրանք գուրս ես գալիս հասարակութեան մէջ <sup>1)</sup>:

Բայց հարց է թէ այդպէս զուրուղը նշանակութիւն կունե- նմյ անհաւատների համար, որոնց մէջ կանանց մերկ երեսին նա- յելը այնքան սովորական բան է որքան որևէ ուրիշ շարտօնեալ մսին» նայելը:

Դէպի ափ նաւարկելիս մենք այնպիսի զգացում ունե- ցանք՝ որպիսին կարծում կունենայ ամեն մի հաւատացեալ երբ, որոնելով իր հոգուն՝ գտնում է և մինչ յաւիտեան նստում է կաթնահոս գիտի մօտ եօթերորդ երկնքումը:

1) Նախ բան Շահի կանանց պալատից գուրս գալը, յառաջագոյն քա- ղաքում յայտարարւում է և հրամայում, որ ոչ ոք չպէտք է երևայ, եթէ չէ ուզում մեռնել: Այս կոչումը է Ղուրուղ:

Թէպէտ մեր տեսած բաները մեր կարծիքով անմաքուր էին և պղծում էին յաւիտենական կրակին դատապարտուած մահկանացուների ներկայութիւնսից՝ այնուամենայնիւ մեր սըրտերը բացուեցին, զուարժացան՝ երբ մեր աչքերն ընկան կանաչ դաշտերի, թարմ ծաղիկների և հոսող ջրի վրայ. Յիրաւի տեղ տեղ երևացող վերթերն այնքան կանաչ էին որքան են Պարսկաստանի կանաչները:

Մեր ուշազրութիւնը գրաւեցին բազմաթիւ տներ, որոնք բոլորն էլ ներկուած ու գեղազարդուած էին այնպէս որ կասկա թէ նրանք պատրաստում էին մի Շահ ընդունելու համար, Մենք ցամաք իջանք մեծ բազմութեան մէջ, որ նոյնքան հետաքրքրութեամբ ցանկանում էր մեզ տեսնել որքան իրանի ժողովուրդը՝ անզլիկական դեսպանութիւնը Պարսկաստան մտնելիս:

Բայց այստեղ կարծես թէ ոստիկանների կատարեալ բացակայութիւն կար. Փէրաշներ չկային որ ճիպոտներով քշէին, հեռու պահէին ամբոխին. ոչ մի հարուած չէր տրում մէկին, ոչ մի ոտ չէր վեր բարձրացնուում.. Եթէ մեր երկրում ամբոխը ծաղրէր անզլիկացիներին մօրուք չունենալու համար, ինչպէս այստեղ մեզ ծաղրում էին ունենալու համար, էլ ճիպոտների հարուածներին վերջ չէր լինի. բայց այստեղ ոչ մի բան չէին անում արգելելու անհաւատների նայուածքները կամ փակելու նրանց բերանները. նրանք որքան ուզում էին հանգիստ կերպով ծիծաղում էին, կարծես թէ երբէք հատուցում կամ պատիժ չինէր նրանց համար:

Մէհմանդարը կառքեր էր պատրաստել մեզ քարվանսարան տանելու. Այդ կառքերը մի տեսակ տանող մեքենաներ էին որ բոլորովին նոր էին. որովհետև մենք թէկ Պոլսում տեսել էինք տաճկական արարաներ, սակայն նրանք հչինչ էին համեմատած սրանց հետ. Մրանք մեզ այնքան արագութեամբ էին տանում, որ շնչներս կտրուում էր. Նախ քան մենք կարողացանք ստուգել թէ ի՞նչ տեսակ մեքենաների մէջ էինք դրուել և թէ ի՞նչպէս էր որ մենք տարուում էինք այդքան ապշեցուցիչ սրընթացութեամբ՝ արդէն քարվանսարայի դուռն հասած՝ իջել էինք:

Ամեն անգամ երբ մէհմանդարը մեզ հետ խօսել էր քարվանսարայի մասին, մենք կարծել էինք թէ տեսնելու ենք մի շինութիւն, որ բաց էր ամեն մարդի և գաղանի համար, որ կը կամենար մտնել և իւրացնել որևէ մէկ դատարկ սենեակը կամ ախոռը, բացի նրա բարեպաշտ հիմնադրից, ոչ ոքին շնորհակալ լինելու. Բայց որքան զարմացանք, երբ իջանք մի տան դրան առաջ, ուր կանգնած էին զա-

նազան անուն ու պաշտօն ունեցող Փրանկներ՝ գլուխները բաց, և երկու երեք էլ կանայք առանց քողի—բոլորը պատրաստ մեզ ընդունելու: Նրանք մի տեսակ թափօր կազմելով դեսպանի առաջից գնացին մինչև հասան մի սենեակ, որ զարդարուած էր հայելիներով և շրջապատուած էր այնքան բազմաթիւ զարդերով, որ այժմ անկարող եմ մի առ մի յիշել:

Մէհմանդարն ապա մեզ ասաց թէ առ այժմ այդ պիտի լինէր մեր բնակարանը և աւելացրեց որ ինչ ժամանակ մենք որմէ բանի կարիք կը զբայինք, միայն պիտի քաշէինք մի թել որ կախուած էր պատից և մեր հրամանը կատարելու համար կ'երևային ստրուկներ աւելի շուտ, քան մինչև անդամ այն ջիները, որ ցցւում էին Ալարդինի առաջ նրա հրամանները կատարելու:

Այս բոլորը մեզ ապշեցնում էր:

Այսաեղ մենք գտնուում էինք մի տան մէջ, որի նմանը ոչ մի պարսկական Շահ Նուշիրուանի օրից երազում էլ չէր կարող տեսած լինել—մի տուն՝ որի մէջ աւելի ճոխ փարթամութիւն կար, քան մեր ամենափառաւոր պալատներում: Պատուհանների ապակիները ամենամաքուր տեսակիցն էին, գորգերն այնքան քիչ նշանակութիւն ունէին, որ ամեն մարդ կօշիկներով էին ման գալիս նրանց վրայ. պատերը դեղեցիկ կերպով նկարուած էին և սենեակներում այնքան աթոռներ կային, որ կը բաւականանային թէհրանի բոլոր մեծամեծների համար նրանց վրայ նստելու: Մի խօսքով այդ տան մէջ այնքան ճոխութիւն և առատութիւն կար, որ երկար ժամանակ չէինք կարողանում համոզուել դրա վրայ նայելու սրպէս բնակարանի՝ որ պատրաստուած էր մի օտարականի համար:

Մնաս բարեաւ, վերջին բարե, ով մեծահոչակ, գովեալ հիւրասիրութիւնք արևելքի, մնաս բարեաւ, եթէ այս է ձեզ, որով եւրոպացիները ընդունում են օտարականին:

Սակայն ինչ որ աւելի ևս տարօրինակ էր, այն Է թէ մենք հազիւ մի քանի բոպէ էր ինչ մտել էինք այս տունը և արմանքի ու զարմանքի մէջ էինք՝ երբ ներս եկաւ մի գեղեցկադէմ անգլուհի և մէհմանդարի միջոցով մեզանից հարցրեց թէ արդեօր չէինք կամենայ «տեսնել մեր անկողիները». զոնէ մենք այդպէս հասկացանք նրան: Մենք ուրիշ տեսակ անկողնի մասին գաղափար չունէինք բացի այն տեսակից, որ մեզ հետ տանում ու փուում էինք գետնի վրայ. ուստի ամենայն յօժարութեամբ շտապեցինք տեսնելու անկողինը և նոյնպէս մի ուրիշ առարկայ որ անչափ զարմացրեց մեզ:

Շահի գահը որի վրայ նա բազմում է դատաստան անելու

և դողացնելու ամբողջ աշխարհը՝ մէկ ծայրից մինչև միւս ծայրը, աւելի փառաւոր չէր քան այն անկողինը որ որոշուել էր դեսպանի համար: Մահճակալի օրինակը գուցէ վերցրել էր մուղուների «սիրամարգի գահից»: Չորս սիւնեակների վրայ որ տարօրինակ կերպով շինուած էին փայտից, բարձրացրուած էր թանկագին կտորներից մի ամփովանի, որից կախուած էին այնպիսի լայն ու ճոխ վարագոյններ որոնց նմանը կախուած են թէհրանի մեծ դահլիճում: Նրա վրա դրուած էին ամենափափուկ և ամենաթարմ ներքնակները, որոնց վրայ դիզուած էին բարձեր թեք ընկնելու համար:

Անգլիայի «լուսներես դուստրը» առաջարկեց որ դեպան այստեղ անցկացնէր գիշերը, և նրա հրաւէրը, ինչպէս սպասելի էր, ագահութեամբ ընդունուեց—մի հանգամանք՝ որին նաև անգլուհին, ինչպէս երևաց, լաւ վարժուել էր, որովհետեւ նրա երեսի վրայ չերևաց ժպիտի կամ շիկնելու ամենաթեթև նշոյլը:

—Ալլահ! իլ Ալլահ, գոչեց Միրզա Ֆիրուզը. ես ապշել եմ: Աղտեղութիւն ուտեն մէկ բան է և ուտել այս ձևով՝ մի ուրիշ բան: Եթէ ամեն մի քայլափոխում պղծութիւնը մեր աչքի առաջ գար, ես պիտի ասեմ, որ մենք լաւ բարեբախտութեան ենք հանդիպել, և մեր աստղերը աշխատում, գործում են մեզ համար: Տես մեզ համար պատրաստուած է հչ միայն դրախտի հանգստութիւնը, այլև այնտեղի հուրիներն էլ ահա պատրաստ են այստեղ և սպասում են մեր հաճոյքը կատարելու:

Յանկարծ կարծես թէ մի ինչ որ բան քարվանսարայում մեծ տպաւորութիւն գործեց, և ահա դեսպանին լուր տրուեց թէ չէրքէզուհին հասել է: Անհաւատները դարձեալ նոյն խընամբով և ուշագրութեամբ՝ ինչպէս մենք նկատել էինք նաւում, նրան առաջնորդում էին ուղղակի Միրզա Ֆիրուզի մօտ, բայց Մահրումն ու Սէյիդը արգելեցին նրանց: Նրանցից ոչ ոք չէր կարողանում հասկանալ թէ նա մի լոկ ստրկուհի էր: Մէհմանդարն ինքն էլ երբ Անգլիա հասաւ, սկսեց նմանուել իր հայրենակիցներին և նրան մատուցանում էր մի յարգանք՝ որին արժանի չէր նա:

—Ո՞րտեղ տեղաւորենք տիկնոջը, հարցըեցնա դեսպանից:

—Տիկին, իրաւ, բացազանչեց Միրզա Ֆիրուզը. տիկին, այդ ի՞նչ բան է: Դուք ինձանից լաւ գիտէք որ նա տիկին չէ, որ նա միայն մի ողորմելի ստրկուհի է. ուստի ի սէր Ալիի, մի թոյլ տուէք որ նրա հետ վարուեն որպէս մի տիկնոջ հետ: Նրան մի անկին տուէք, և թողէք այնտեղ նստի:

Այն հետաքրքրութիւնը, որ ինչպէս երևաց, չէրքէզուհին

գրգուել էլ անգլիացիների մէջ՝ աւելի մեծ էր քան մենք կարող էինք երևակայել։ Նրանք արդէն շատ հետաքրքրուել էին մեզ տեսնելու, բայց նրան տեսնելու համար՝ նրանց հետաքրքրութիւնը շատ աւելի մեծ էր. որովհետեւ թէպէտ ոչ մի բան չէր կարող աւելի մեծ լինել քան այն հակապատկերը որ կար մեր մօրուքաւոր երեսների և նրանց հարթ (գերծուած) երեսների մէջ, այնուամենայնիւ կարծես թէ նրանք բոլորովին մեղ մօռացել էին և միայն ցանկանում էին նրան՝ չէրքէզուհուն տեսնել։ Առաւոտից մինչև գիշեր նրանք խուժում էին մեր տունը և դիտում էին նրա սենեակի պատուհանները։

Բաւական չէ որ նրանք նայում էին, օտարոտի աղմուկներ էլ էին հանում. մի բան, որ ամենից տարօրինակն է, նրանց մէջ կար և մի նկարիչ, որը պատրաստ սպասում էր չէրքէզուհու պատկերը վերցնելու, երբ նա երևար։

«Եթէ այս երկրում ստրուկների հետ այսպէս են վարում, ասացինք մենք, ուրեմն կանայքն ի՞նչ երջանիկ վիճակ պիտի ունենան։»

Յիրաւի, եթէ երջանկութիւն է կանանց համար շրջիւ առանց ներքինու, բաց երեսով, որպէսզի մարդիկ որքան ուզում են նայեն, և թոյլ տրուի նրանց որ ազատ կերպով գործածեն իրանց աշքերն ու լեզուները, ուրեմն անգլիացի կանայք գերազանցօրէն երջանիկ են։

### Գլ. ԺԵ.

Դեսպանին այցելում է Պլիմոթի քաղաքականութիւնը—նաև ընթրում եւ մըունում է անկողին, բայց չէ կարողանում քննել։

Միրզա Ֆիրուզը սաստիկ զայրացած էր որ կառավարութիւնը ոչ ոքի—մեծ կամ փոքր—չէր ուղարկել դիմաւորելու իրանց ցամաք իշնելիս։ Ոչ ոք նրան չէր ասել «Սոշամէշիլդ»<sup>1)</sup>, ինչպէս մի պարսիկ ասում է մինչև անգամ ջնուդին, երբ վերջինս ոտքը դնում է նրա դրան սեմի վրայ, ոչ էլ որևէ մէկը հետաքրքրուել էր թէ արդեօք նրա ուղեղը առնդջ վիճակի մէջ էր, կամ արդեօք նրա քէֆը լմւ էր։

Հսթէէղբալը <sup>2)</sup> այդ ամենահասարակ սովորութիւնը, որ

1) Բարի էք եկեւ,

Մ. Թ.

2) Մի պատգամաւորութիւն է որ քաղաքապետն ուղարկում է գիւմարելու մի նշանաւոր օտարականի, երբեմն ինքն էլ է գնում։

Պարսկաստանում միշտ կատարւում է դէպի օտարականը, այս-  
տեղ բոլորովին զանցառութեան էր տրուած, և յիշելով՝ թէ  
ինչ պատուվ և ուշադրութեամբ էինք ընդունել անգլիական  
դեսպանին մեր երկրում՝ միաձայն բողոք յայտնեցինք հիւրա-  
սիրութեան պակասութեան դէմ, և ցաւեցինք որ թողել, հե-  
ռացել էինք մեր հայրենիքից:

Մենք սաստիկ վրդովլուած՝ յարձակուեցինք մէհմանդարի  
վրայ և բարձրաձայն գանգատուեցինք կառավարութեան դէմ,  
բայց նա իրան արդարացրեց ասելով որ Անգլիայի և Պարս-  
կաստանի սովորութիւնները տարբեր են, և որ ինքն յոյս ու-  
նէր որ, եթէ մենք մի քիչ էլ համբերէինք՝ շուտով կը տես-  
նէինք որ ունայն ու դատարկ խօսքերի և հաճոյացուցիչ պա-  
տիւնների փոխարէն՝ մեզ իսկական հանգստութիւն ու միսիթա-  
րութիւն կը տրուէր:

Ինչ և է, երկար ժամանակ էր ինչ մենք բնակւում էինք  
քարվանսարայում՝ երբ քաղաքազլուխը եկաւ դեսպանին այցե-  
լելու:

Նա եկաւ մենակ, առանց հետևորդների:

Նա ոչ եղաքի ձիեր ունէր, ոչ իր առջևից վազող ֆէրաշ-  
ներ, ոչ զայլան տանողներ, ոչ կօշիկ կրողներ, ոչ էլ ֆէրաշ-  
ներ՝ որ ճիպոտներով ճանապարհ բաց անէին նրա համար: Նա  
ներս մտաւ գլխարկը ձեռին, և կարծես առանց մտածելու թէ  
մրտեղ պիտի նստէր, նստաւ մի աթոռի վրայ որ ամենից մօտ  
էր իրան:

Միրզա Ֆիրուզը որ կինդանի քաղաքավարութիւն ու  
չնորհք էր, և որ կատարելապէս հասկանում էր թէ ամեն մի  
դասակարգի մարդ ինչ տեղ պիտի նստի սենեակում (նայած  
նրա աստիճանին), բոլորովին զարմացաւ, ցնցուեց երբ տե-  
սաւ որ քաղաքապետը նստաւ մի տեղում՝ որ բաւական լաւ  
էր միայն մի քեադիսողայի <sup>1)</sup> համար: Շատ ինդրելուց յետոյ՝  
նրան համոզեց նստել բազմոցի վրայ, իր մօտ:

Իսկապէս եթէ մշհմանդարը մեզ ասած չլինէր թէ նա  
քաղաքապետն էր, մենք նրան ֆաղիրից <sup>2)</sup> մի քիչ աւելի բար-  
ձըր մարդ կը կարծէինք. և թէպէտ նա մեզ հաւատացրեց որ  
բազմաթիւ նաւերի հշամանատարն էր ու կոռի մէջ էլ առիւծ՝  
մարմնով այնքան փոքր էր և այնքան էլ հանդարտարարոյ՝ որ  
մեզ համար հարկաւոր էր մեր ամբողջ երևակայութիւնը, որ-  
պէս զի կարողանայինք համոզուել նրա մեծութեան մասին:

1) Քաղապետ կամ գիւղապետ:

Ե. Թ.

2) Աղքատ, չքաւոր, իեղճ:

Ե. Թ.

Նա եօթանասուն տարեկան էր:

Անգլիայում մեր համդիպած առաջին նշանաւոր անձը լինելով և դեսպանն էլ մեր շահերը ի նկատի ունենալով՝ իրաւացի համարեց, որքան կարելի էր, լաւ տպաւորութիւն թողնել նրա վրայ, ուստի ի գործ դրեց այն բոլոր յարգավեցու գեղեցիկ ռմերը, որոնց քաջ հմտա էր:

Երեք անգամ նրա առողջութեան մասին հարցնելուց (հետաքրքրուելով թէ ինչպէս էր նրա որպիսութիւնը, թէ արդեօք նրա ուղեղն առնդղ էր և թէ նրա քէֆը լմա էր) յետոյ, նա շրջուեց դէպի ինձ ու մէհմանդարը և ասաց.

Ալհամդ-օլ-Ալլահ (փառք Աստուծոյ) քաղաքապետն աղնիւ անձնաւորութիւնն է: Կոռուի մէջ նա անզուզական է. նա կատարեալ անձն է. մի խօ քով նա մի այնպիսի անձնաւորութիւն է՝ որի վրայ մարդուս աշխերը սիրում են նայել: Մենք երջանիկ ենք որ ցամաք իջնելուց յետոյ, ամենից առաջ այսպիսի անձնաւորութեան ենք հանդիպում. սա մի հանգամանք է որ բարեբախտութիւնն է գուշակում. գործներս աջող է զնում և, քաջայայտ է, որ Անգլիայի թագաւորը մեծ իմաստութեան իշխան է, որ սրա պէս մարդ է ընարել որպէս իր ներկայացուցիչը: Այսպիսի անձնաւորութեանց հետ ծանօթանալով՝ երկու երկրների մէջ եղած բարեկամութիւնը կամրապնդուի և պարսիկներն ու անգլիացիներն այսուհետեւ միմեանց եղբայրներ կը կոչեմ:

Դեսպանի այս խօսքերը, մէհմանդարը վեց բառով, ինչպէս մեզ թուաց, թարգմանեց և միակ պատասխանը որ նա ստացաւ, մէկ «օ՛» էր:

Թէ նրա ասելիքն ինչպէս միայն այդ մէկ կարճ բառովը արտայայտուեց՝ մենք զեռ պիտի իմանանք: Դեսպանը պահ մի սպասեց իր խօսքերին պատասխան ստանալու, և վեր էր ոլորում իր բեխերը, զոյում, հարթում էր իր մօրուքը այն յուսով, որ իրան շուտով կը փոխարինուէր մեծարանաց համապատասխան խօսքերով, երբ քաղաքապետն ընդհատելով լուսիւնը, նկատեց թէ «սիրուն օր է», այն էլ ի հարկէ ոչ այն նշանակութեամբ որ Պարսկաստանում մենք կը տայինք այդ խօսքին, այսինքն թէ՝ արեւ փայլում է դեսպանի ուրախարար ժամանման առթիւ. ոչ, նա միայն ուզում էր ասել թէ՝ եղանակը լաւ է, և անձրեւ չէր գալու:

Մենք զարմանքով միմեանց երեսին նայեցինք, և հէնց որ նա հեռացաւ ու մէհմանդարն էլ դուրս գնաց, բուռն արտաւայտութիւն տուինք մեր զգացումներին:

— Դու երբ և իցէ նրա պէս էշ տեսել էիր, բացականչեց  
մէկը:

— Քաղաքագում է նա, հա, մի պարսկական շուն աւելի  
լաւ քաղաքագում կը դառնար քան նա, ասաց միերկրորդը:

— Ահմադ-օլ-Ալլահ, ասաց մի երրորդը. մւր են Փրանկ-  
ները և ուր պարսիկները: Մի պարսիկ ուղտապան՝ այդ ան-  
հաւատից աւելի շնորհքով կը խօսէր:

Ապա ամենքս սկսեցինք գովել ու գովասանել մեր դես-  
պանին իր հանճարի և պերճախօսութեան համար որ իսկապէս  
այս դիպուածում իրան բարձրացրել էր իր առաջին ցոյցն ա-  
նելով այդ խեղճ հպատակի (քաղաքապետի) առաջ:

— Իրաւ, ասացինք մենք, Շահը այնպիսի մի մարդ է  
ընտրել, որը պարզերես կանի նրան այս օտար երկրում: Նա  
ընտրել է մէկին, որը անհաւատների համար կը ծառայի որպէս  
նմոյշ՝ ցոյց տալու նրանց թէ Պարսկաստանը հրքան գերիշխան  
է միւս երկրների վրայ:

Մեր խրախումիչ ու գովասանական խօսքերը մինչեւ մի  
աստիճան մեղմացրին դեսպանի տհաճութիւնն ու դժգոհութիւ-  
նը, որոնց պատճառ էր զարձել այն եղանակը, որով իրան հետ  
ցարդ վառուել էին: Մենք էլ մեզ մի կերպ միսիթարեցինք այն  
մտածութիւնով, որ ինչքան որ անբարեխնդութիւն կը լինէր  
պարսիկներին դատել այն արար շէլիով որ կառարարում է  
Բուշիրը, նոյնքան էլ անբարեխնդութիւն կը լինէր դատել  
անգլիացիներին Պլիմըթի քաղաքագլուխով:

Քարվանսարայում՝ ճաշը համարեա նոյն ձևովն էր պատ-  
րաստում և սեղանի վրայ դրում ինչպէս նաւումը. բայց մեր  
զարմանքն անչափ եղաւ, երբ տեսանք սեղանի վրայ դրուած  
բուրոր արծաթեայ թանկագին զարդերը:

«Սա քարվանսարայ է, ասացինք մենք, թէ մեզ խարում  
են, Պարսկաստանում մենք մեզ շատ քաղդաւոր ենք համարում,  
երբ մի քարվանսարայում գանում ենք մի խեղճ, ողորմելի քաղ-  
կալ դրան մօտ նստած՝ մեզ մի կտոր հաց ու մի հատ սոխ  
ծախելու համար, բայց այստեղ Հաթէմ Թայի հարստութիւնը  
կայ»:

Մէհմանդարը մեզ հաւատացրեց որ այդ քարվանսարայ է  
և միայն քարվանսարայ, և որ անգլիական ամեն՝ մի քաղաքում  
մենք կը գտնէինք հչ միայն մէկ՝ այլ մի քանի այդպիսի քարվան-  
սարաներ, ու շատ տեղերում էլ դրանից աւելի լաւերը, աւելի  
փառաւորները:

Ինչ և իցէ, մէկ փոքրիկ գաղտնիք կար, որ մէհմանդարը  
մեզ համար բացատրելով, շատ պակասացրեց մեր բաւարարու-

թիւնը, և մենք սկսեցինք կասկածել, թէ արդեօք մեր պարսկական կիսաւեր շինութիւնները (քարվանսարանները) աւելի լաւ չէին: Այդ գաղտնիքն այն էր, որ երբ մենք հաւաքելով մեր իրերը պատրաստում էինք թողնել քարվանսարան՝ մի ինչ որ փոքրիկ բան որ կոչում էր «բիլ» (Bill) մատուցուեց մեզ, որի մէջ նշանակուած էր ամեն մի պատառ որ կերել էինք, ամեն մի մում որ վառել էինք և ամեն մի բաժակ որ կոտրել էինք. և դրանց գինն իսկոյն վճարեցինք առանց մինչև անգամ դատաւորի կամ արդարութեան դիմելու և ոչ դժգոհութեան ձայն բարձրացնելու. հակառակ դէպքում օտարականի ապրանքը կամ ունեցածը կը գրաւէին և գուցէ իրան էլ կը բանտարկէին:

Մենք բաւական դանդաղ կերպով անցկացրինք մեր ժամանակը, մինչև հասաւ պառկելու ժամը: Մենք մեզ զուարձացնում էինք քաշելով վառարանի մօտ կախուած թելը փորձելու համար թէ իսկապէս մեզ մօտ կը դային քարվանսարայի ստրուկներն ու ծառաները եւ իսկապէս նրանք իսկոյն յայտընտում էին և բաւական էլ ձանձրացած էին երևում: Բայց մենք այնքան քաշեցինք թելը, որ այնուհետև ոչ ոք չէր պատախանում. ինչքան քաշում էինք ոչ ոք չէր երևում. մենք էլ այնքան քաշել էինք որ կշտացել էինք և այլս զուարձութիւն չէինք զգում:

Բայց երբ բաւական յոգնած՝ քնի կարիք էինք զգում, կլոր երես անզիւացի աղջիկը, որին մենք տեսել էինք առաւօտը, ներկայացաւ վառած մոսը ձեռին՝ և հրաւիրեց դեսպանին հանգստանալ, որն ուրախութեամբ ընդունեց հրաւէրը:

Սա արդէն նշան էր որ բոլորս հեռանայինք: Մենք էլ ամեն մէկս յետոյ մտանք, տեղաւորութեցինք մի լաւ ծածկուած գահի մէջ, որի նմանն արդէն նկարագրուած է:

Գիշերը շատ աղող էր անցնում երբ յանկարծ զարթնեցի Միրզա Ֆիրոզգի ձայնից որ գալիս էր չգիտեմ քարվանսարայի շինութեան որ կողմից: Ես իսկոյն ելայ անկողնուցս, խաւարի մէջ դուրս գնացի, և գտայ նրան. նա, ինչպէս ինձ թուաց, մեծ նեղութեան մէջ՝ քայլում էր դուրս իր գիշերուան շորերով և նրա ետեից գնում էին քարվանսարայի կառավարիչն ու կինը իրանց ծառաներով հանդերձ:

Նրանք չէին հասկանում իրար: Անհաւատները բոլորովին շուարած էին, նրանք զարմանում էին թէ դեսպանն ինչ էր ուզում իր բարկութեամբ որ կատաղութեամբ նա արտայայտում էր պարսկերէն և անզիւերէն խառն բառերով:

Ինձ տեսնելուն պէս՝ նա ըացագանչեց.

— Մեռնում եմ, ես մեռնում եմ. սրանք սպանեցին ինձ.

այ, քանդուի սրանց տները, ջըհաննամը գնան բոլորը՝  
Հետաքրքրուելով բանից դուրս եկաւ որ, քարվանսարա-  
յի մարդիկը ենթադրելով որ մենք տաք կլիմայից եկած լինե-  
լով շատ կը մրսէինք, դեռապանի անկողնում այնքան վերմակ-  
ներ էին դիզել, որ նրանց տակ պառկելուց մի քանի բոպէ  
յետոյ, նա սկսել էր խեղդուել:

Նա փախել էր կարծես թէ աներկրայ մահից և ապաս-  
տանուել էր մի նրբանցրում և իր աղմուկով ու զոշիններով  
իր շուրջն էր հաւաքել քարվանսարայի բոլոր մարդկանց:

Նրան հանգստացնելով մենք կրկին մտանք մեր ան-  
կողինները. բայց անչափ զարմացանք, երլ տեսանք թէ անհաւատ  
կանայքն ու աղջկերքը ինչպէս անսիոյթ կերպով շարունակ  
խառնում էին տղամարդկանց հետ, և թէ ինչքան անհոգու-  
թեամբ մարդիկ տեսնում էին որ իրանց կանայքը սպասառ-  
ում էին մեզ և կատարում այն պաշտօնները որ մենք կատա-  
րել ենք տալիս միայն մեր հարեմներում...:

Մենք տեսանք որ ոչ մի տարբերութիւն չկար տղամարդ-  
կանն ու կանանց սենեակների մէջ, ինչպէս կայ Պարսկաստա-  
նում: Նրանք—մարդ ու կին նոյն սենեակումն էին գնում, ո-  
րովիետե եթէ այդպէս վինէր՝ այդ քարվանսարայի ննջարաննե-  
րում բնողները չէին կարող բոլորը միաժամանակ միասին  
դուրս գալ գեսպանի բարձրացրած աղմուկի վրայ,

Այդ գիշերը կանայքն այնքան գրաւիչ չէին երևում ինչպէս  
երևացել էին ցերեկը, որովհետեւ նրանց երեսների վրայ կային  
թղթի փոքրիկ կտորներ, որ մենք կարծեցինք թէ թալիսմա-  
ներ էին որ փակցրուել էին կամ նրանց գեղեցկութիւնը պահ-  
պանելու՝ կամ չար աչքից ազատ պահելու՝ և կամ դիւթելով  
չթողնելու, որ նրանց վրայ կնճիռներ ու մաղեր երևային:

Լոււցման արարողութեան գործը վատ էր գնում մեզ հա-  
մար, որովհետեւ ամեն տեղ ջուր կար բացի այնտեղ՝ ուր մենք  
էինք ուզում: Մի փոքրիկ սենեակում՝ որը մեզ ցոյց տրուեց,  
այնպէս մի հնարք էր բանեցնուել, որ ջուրը կարծես թէ կա-  
խարդական զօրութեամբ սրբնթաց ներս էր հոսում և իսկոյն  
աներեւոյթանում: Մեր շատրուաններից շատ աւելի զարմանա-  
լի էր:

Այս բանը գրաւեց մեր ջէլովտարների և մէյթարների ու-  
շադրութիւնը, և երբ նրանք ցանկանում էին զուարճանալ և ժա-  
մանակ անցկացնել՝ գալիս խաղում էին այս ջրի հետ և իրենց  
այդ խաղով սաստիկ զայրացնում էին ֆրանկներին:

Եթէ այդպիսի մեքենաներ որ արդիւնք էին մեծ հանճարի,  
Պարսկաստանում լինէին՝ փոխանակ մի մութ սենեակում փա-

կելու՝ նրանց կղնէին Շահի առաջ օրը ցերեկով և հնարողին  
էլ պատոյ զգեստ կը տրուէր:

Ճիշտն ասած՝ մենք միմնանց հետ վիճաբանելուց յետոյ  
նոյն եզրակացութեան եկանք, որ անգլիացիք բարդացնում են  
այն՝ ինչ որ բնութիւնը կամեցել է պարզ լինի:

ԴԼ. ԺԳ.

Գեսպանը շարունակում է իր ճանապարհորդութիւնը: — Ուղեկառքերի նո-  
րութիւնը Պարսիկների համար: — Հասջի Բաբայի Նկատողութիւնները անգ-  
լիական ճանապարհորդութեան մասին:

Մէհմանդարը մեզ յայսնեց, որ մենք պիտի պատրաս-  
տուէինք ուղեկորուելու դէպի մայրաքաղաքը: Մեր իշխանաւորը  
փոքր ինչ ցնցուեց, որովհետև նա սպասում էր որ մի նշանաւոր  
ֆրանկ պիտի ուղարկուէր աթոռանիստից իրեն դէպի Լոնդոն  
առաջնորդելու համար, և որ սպասելով այդպիսի մէկի համե-  
լուն՝ ինքը թերև ժամանակ կունենար վայելելու հանգատու-  
թեան քաղցրութիւնը այդքան երկար ճանապարհորդութիւն  
անելուց յետոյ:

Նա ակնկալում էր նոյնպէս, որ այստեղ իրեն համար արած  
կը լինէին այնպիսի կարգադրութիւն՝ որպիսին Պարսկաստանում  
են անում, երբ մի դժուպան կամ նշանաւոր անձն անցնում է մեր  
քաղաքներից, և որ մենք այդպիսի մի կարգադրութիւնից շատ  
կօգտւէինք, որովհետև մենք լաւ յիշում էինք թէ վերջին ան-  
գամ անգլիական դեսպանը Պարսկաստանից անցնելիս՝ ինչպէս  
էր իրան հարստացրել այն պաշարներով, որ նա ժողովել էր  
այն քաղաքներից ու գիւղերից, որոնց միջով նա անցել էր:

Մենք նաև յիշում էինք թէ քանի հաւատացեալներ տու-  
ժել էին ի պատիւ անհաւատների, և մտածում էինք, որ այս-  
տեղ կը զուարձանայինք տեսնելով որ անգլիացի երկրագործ-  
ներն էլ ֆալախայի կենթարկէին և իրանց ոտների վրայ կը ստա-  
նային այն հարուածներից մի քանիսը, որոնցից ստացել էին  
պարսիկ ռայեաթները<sup>1)</sup>:

Սակայն մեր բոլոր յոյսերը ի դերև ելան երբ, մէհման-  
դարը մեզ ասաց, որ հետեւեալ օրը, առաւտեան աղօթքի ժա-  
մանակից մի քիչ յետոյ, մի ուղեկառք պատրաստ կը լինէր  
մեզ տանելու մայրաքաղաք: Նա ազդարաբեց մեզ պատրաստ

1) Երկրագործ, հպատակ:

մինել մի որոշեալ ժամի, որովհետև նա հաւաստիացրեց որ  
այդպիսի կառքերի քըոզները այնքան ինընիշխան և խիստ մար-  
դիկ են՝ որ չէին սպասի որևէ մարդու հաճոյքին, չէին սպա-  
սի նոյն խակ իրանց թագաւորի համար, եթէ վերջինս պատահ-  
մամբ մէկ կամ երկու ժամ ուշանար հարկաւոր գործով:

Եւ նրա խօսքերն իրականացան, որովհետև հետևեալ առա-  
ւոտը, երբ մենք հազիւ վերջացրել էինք մեր մօրուքների սանտ-  
րելը և դեռ չէինք որոշել դըրէին՝ աղօթելու համար՝ մեզ վա-  
խեցրեց մէհմանդարի ներկայութիւնը, որը շտապով հրամայեց  
մեզ աճապարել դէպի կառքը, ասելով որ ոչ մի բոպէ չպէտք  
է կորցնել:

— Բայց ինչի՞ համար այսքան շտապել յանուն Հօսէյնի,  
հարցը ես: Միթէ դեռ մի ամբողջ օր չկմյ մեր առաջ: Արեն  
այնքան տաք չէ այստեղ, ինչպէս մեր երկրում, որ մենք պար-  
տաւորութիւն զգանք կանուխ առաւտանց ճանապարհուել մեր  
հանգստատեղից:

— Մենք ոչինչ գործ չունինք արևի տաքութեան հետ,  
պատասխաննեց մէհմանդարը: Այստեղ ժամանակ չեն վատնում,  
ամեն մի բոպէ նշանակութիւն ունի:

— Բայց ովկ է ժամանակ վատնում, բացականչեց Մոհամէդ  
բէգը, որ դեռ իր ծնկների վրայ էր և իր շրթունքներով կըրկ-  
նում էր «Ալլահ, ներիր ինձ»: Միթէ մարդ աղօթելով ժամա-  
նակ է վատնում: Մեր օրնեալ մարդարէն...

— Մարդ, գոչեց մէհմանդարն ընդհատելով նրան, կառա-  
պանի ի՞նչ փոյթն է օրհնեալ Մարգարէն:

Յանկարծ լսուց մի եղջերափողի ձայն, նման այն բանի  
ձայնին, որ գործ է ածւում մեր բաղնիքներում կանանց բաղ-  
նիք հրաւիրելու համար: Այդ ձայնը, մեզ ասուց, յայտարարում  
էր որ կառապանի համբերութիւնը վերջին աստիճանին էր հասած:

Այդ ձայնին հետեւց դեսպանի ձայնը: Նա որոտաց:

— Այ դուք պիղդ մարդիկ, այ այրւած հայրերի զաւակ-  
ներ, ինչմէ էք ուշացնում, չէք տեսնում որ Փրանկներն սպա-  
սում են. դէ, շուտ արէք, կապեցէք ձեր զէնքերը և հեծէք:

Առանց մի խօսք ասելու, մենք հաւաքուեցինք, գօտեպնդուե-  
ցինք, մեր փամիշտակալները կապեցինք, վերցրինք մեր հրա-  
ցանները և սեմից դուրս գնալիս՝ մեր ուղիղ (աջ) ոտները առաջ  
գնելով ու «բիսմիլլահ» ասելով՝ թողինք քարվանսարան և դուրս  
ելանք փողոց:

Դեսպանն ինձ կանչելով ասաց որ ես իր հետ պիտի  
գնայի, և Սէյիդը, Մահմուրը և չէրքէզուհին էլ միասին՝ բայց  
պատուիրեց որ միւմներին ճանապարհ ձգէի առանց ուշացնելու:

Մէհմանդարը չորս հոգու տեղաւորելով ուղեկառքի մէջ, ուզում էր մի հինգերորդ մարդ էլ մտցնել՝ երբ բարձր աղաղակները նրան կապ տուին:

—Յանուան Ալիի, հօրդ հոգին վկայ որ այլ ևս տեղ չկայ այստեղ մենք կը մեռնենք:

Որքան աւելի մէհմանդարն աղաչեց, այնքան աւելի նրանք ընդդիմացան. Նրանք շատ հանդիսատ կերպով նստել էին իրանց կրունկների վրայ, ըստ մեր սովորութեան, և ամեն անկիւն բռնուած էր. Ի վերջոյ, մէհմանդարը մեծ ուժով ներս գցեց մի ֆրանկ, որը պիտի ուղեկցէր նրանց մինչև Լոնդոն, փակց գուոր, բարձրացրեց խոհարար Հասանին, սափրիչ Ֆէրէյդունին նստացրեց կառքի ծածկի վրայ և, մինչև մենք ասացինք «Ալլահը ձեզ հետ», կառքը նետի պէս սլացաւ:

Իմ ծննդեան օրից՝ ես գեռ երբէք այդպիսի զարմանալի բան չէի տեսել:

Թէ Հասանը և թէ Ֆէրէյդունը՝ ամենքի առաջ նստել էին մի անքօղ ֆրանկ աղջկայ կողըն, որը կարծես թէ շատ քիչ փոյթ ունէր այնպիսի մարդկանց շփումից, որոնք դաւանում էին բոլորովին տարբեր կրօն:

Անզիացւոց բնաւորութեան ամենատարօրինակ գիծը այն է՝ որ նրանք ոչ մի բան անմաքուր չեն համարում: Նրանք այնպէս շուտ կը դիպչեն մի հրէայի՝ ինչպէս դիպչում են իրանց ցեղակիցներից մէկին, և, դրանից յետոյ էլ՝ ոչ մի արտաքոյ կարգի լուացման կարիքը չեն զգալ...

Բայց, իսկապէս, ոչնչ բան չպիտի զարմացնի մեզ, երբ ի նկատի ունենանք որ Ֆրանկստանի բոլոր ազգերի թագաւորները, լորդերը և համայնքները սիրում և ուտում են անմաքուր գաղաններ:

Մէկ ժամից յետոյ դեսպանը ճանապարհուեց, ինքը, մէհմանդարն ու ես մէկ կառքում՝ իսկ չէրէզունին ու նրա սպասաւորները մի ուրիշում: Ո՛չ մի ձեռով ճանապարհորդութիւնը դեռ ինձ այնքան զուարձութիւն չէր պատճառել, որքան պատճառեց կառքով գնալը: Այս բանի մէջ, անզիացիք անշուշտ աւելի բարձր են պարսիկներից, որովհետո թէև մեր թախմթրէվանը<sup>1)</sup> շատ հաճելի բան է, սակայն ոչ մի բան չէ կարող կառքից<sup>2)</sup> աւելի հանդիսատ ու յարմար լինիլ:

Թախմթրէվանում նստած ժամանակ՝ երբ ջորիներն սկսում են միջակ ընթացքով քայլել, կամ թէ երբ նրանցից մէկը լու-

1) Պատգարակ՝ որ տարւում է երկու ջորիներով:

2) Ուղեկառքը՝ որ գործ էր ածւում շոգեկառքից առաջ:

ժարակամ յառաջ է գնում, իսկ միւսը միայն ծեծուելով՝ մարդ տարօրինակ շարժումների է ենթարկում. սակայն կառքում ամեն բան հաճելի է: Կառքն այնքան հանգիստ շարժում ունի, որ մարդ կարող է իր աղօթքն ասել նրա մէջ, դայլան ծխել և ճաշել:

Սկզբում երբ մտանք կառքի մէջ, օդի մեծ պակասութիւն կար: Մի քանի ապակիները վեր էին քաշուած. սակայն մենք չկարողանալով նրանց վայր թողնել, մօտ էր որ խեղդուէինք, մինչև մի անհաւատ մեզ ցոյց տուեց հնարքի գաղտնիքը:

Ես հարց եմ տալիս թէ՝ արդեօք երբ և իցէ կառքերը կ'ընդհանրանման Պարսկաստանում, որովհետև վերջիվերջոյ, ի՞նչ կայ որ ձիուց աւելի լաւ բան լինի մարդու տանելու համար: Զիու ընդհանուր գործունէութիւնն է որ պարսկին դարձնում է այն՝ ինչ որ է—այսինքն գործունեայ, ճարպիկ և մեծ գործի համարձակ ձեռք դարնող. այն ինչ Փրանկը այսպիսի կառքերով շրջելով՝ բռնում է այն տեղը որ կանայք պիտի բռնեն: Ֆրանկը ստորացնում է իր տղամարդութիւնը նրանով, որ նա նստում է կառքի մէջ փափուկ բարձերի վրայ, պատսպարուած տաքից ու ցրտից, փոխանակ նստելու կոշտ թամբի վրայ, իրան ենթարկելով եղանակի փոփոխութեանը, որ կոշտացնում, զօրեղացնում է մարմինը:

Մենք ճանապարհորդում էինք մի երկրի միջով, որ աւելի լաւ պահուած ու ստուգուած էր, քան Թէհրանի թախտը զաջարի<sup>1)</sup> պարտէզները և Սպահանի Հաշոտ Բէհէշտը<sup>2)</sup>: Ճանապարհի վրայ ոչ մի քարի կտոր չէր երևում: Մենք ենթադրեցինք որ գուցէ ջիններն ու փէրիններն են այդպէս մաքուր պահում, որովհետև մենք ոչ մի այդպէս լաւ մաքուր պահուած բան չէինք տեսել մեր երկրում: Այն ժամանակ միայն, երբ Շահը մուտք էր գործում մեր քաղաքներից մէկը, ժողովրդին ստիպում էին նրա ճանապարհը մաքրել:

Մենք յաճախ հարցնում էինք իրար թէ արդեօք մեր գալստեան առթիւ չէր որ այդքան մաքրութիւն տիրում էր, բայց մէհմանդարը մեզ հաւատացրեց որ ամբողջ Անդլիան այդպէս է: Մենք հաւատացինք նրա խօսքին, մանաւանդ երբ նկատեցինք որ մեր անցքը այդ երկրի միջով՝ ոչ այնքան տպաւորիչ էր որքան մի շարք ուղտերի անցնելը անապատի միջով: Մարդիկ նայում էին մեզ, բայց փոխանակ մինչև գետին գլուխ ի-

1) Ղաջարների գահը:

2) Ութը զբախտը, Մի փառաւոր պալատ էր Սպահանում որ այժմ քար ու քանդ է եղած:

ջեցնելու մեզ, ինչպէս մեզ հրամայուել էր անել անգլիական դեսպանին, երբ նա մտնում էր Պարսկաստան՝ նրանք միայն ծիծաղում և մատով ցոյց էին տալիս մեզ իրարու:

Ամբողջ առաջին օրը մենք ճանապարհորդեցինք, և գիշերը հանգստացանք մի քարվանսարայում, որ աւելի գեղեցիկ էր քան Պլիմթինը: Եւ որքան զարմացանք երբ իմացանք որ այդ օրը մենք մօտաւորապէս երեսուն ֆարսաղ ճանապարհ էինք կտրել—մի տարածութիւն՝ որ մեր երկրում երեք չորս օր կը տեէր մինչև անցնէինք:

Այստեղ ոչ չորի բառներ կար, ոչ բեռներ վայր ձգել, ոչ ձիերի մէջքից գանգատուել, ոչ եաղդան, ոչ անօթներ ու կաթսաներ, ոչ եփ ու թուխ, ոչ խոհարար տանել, այլ ամեն բան մի բոպէում պատրաստուի էր, կարծես թէ Շահն ինքն էր սպասում, կարծես թէ ամիսներ առաջ ամբողջ երկրից նըպաստներ էր հաւաքուել:

Մենք համաձայնեցինք, որ եթէ Խամայիլ բէդ-է-թէլային<sup>1)</sup> տրուէր ամենազօրաւոր Փիրմանը և վաղօրօք ուղարկուէր Սպահան, Պարսկաստանի ամենաառատ քաղաքը պաշար հաւաքելու և պատրաստութիւններ տեսնելու արքայից արքային ընդունելու համար, նա ամեննեին չէր կարող անել այն՝ ինչ որ մենք տեսանք այստեղ, ուր ամեն բան կատարւում էր ամենազարմանալի հանգստութեամբ, չնայած, որ ինչպէս պարզ երևաց, երբէք կախաւ լուր չէր տրուած մեր ժամանման մասին:

Այն բոպէին, երբ մեր կառքերը երևացին, ամեն մարդ շարժուեց մեզ մի որևէ կերպով օգտակար լինելու համար, կարծես թէ այդ մարդկանց մէջ մարգարէներ ու աստղագէտներ կային, որ զեկուցել էին մեր ժամանումը: Նրանք բոլորն էլ կասես մեզ չափ գիտէին, թէ մեզ ինչ էր հարկաւոր, ինչ բանի կարիք ունէինք, որովհետև առանց մեր կողմից մի խօսք ասելու արին մեզ համար ամեն ինչ որ մեզ հարկաւոր էր:

Ո՞վ չէ տեսել մի կարաւանի կամ մինչև անգամ մի շարք բեռնաւորւած ուղտերի ճանապարհուելը Պարսկաստանում, առանց հազարաւոր գոտում գոշիւնների և ընդհանուր վիճաբանութիւնների, «իրաւունք» կամ «ոչ իրաւունք» բառերը թոշելիս բերանից բերան<sup>2)</sup> այնքան արագութեամբ, ինչպէս ճիպոտները իջնում են ֆալախիկային վրայ: Սակայն այստեղ, Ալին վկայ է, որ ոչ մի բառ չասուեց: Այստեղ ձիերը յօժարակամ վազում էին կառքերի մօտ և պատրաստում էին լծուելու: Կա-

1) Ոսկէ Խամայիլը՝ որ Շահի սիրելին էր:

ռապանները բոլորն էլ լաւ հագնուած էին, մտրակները ձեռքերում պատրաստ, մենք մտնում էինք կառքը և թէսրին համրելու ժամանակ չանցած՝ արդէն սլանում էինք:

Երբ հասանք քարվանսարան, փոխանակ վկայ լինելու (ինչպէս Պարսկաստանում) մի ընդհանուր վիճարանութեան ու կոռուի (ծառաների և տէրերի, խոհարարների և ջորեպանների միջև ամեն մէկն աշխատելով մի տեղ գտնել գիշերելու համար), այստեղ տեսանք, որ ամեն բան կարգին էր ամեն բան որոշուած էր, և տիրում էր ամենազարմանալի կարգապահութիւնը: Այստեղ ամեն մի նորեկ՝ թափօրով տարւում էր մի սենեակ, որն այնքան իրն էր լինում, որ կարծես թէ քան տարի շարունակ այդտեղ ընակուելիս լինէր: Այդ սենեակում նա գտնում էր իր համար վառարանը վառուած, պատերից կախուած թելեր՝ որոնցով նա սպասաւորներին կանչէր: Նրա համար ամեն յարմարութիւն կաը այդ սենեակում, ուր նա որքան աւելի աղմուկ էր հանում, այնքան աւելի աղմուկի պատճառ էր դառնում և այնքան աւելի ուրախանում էին քարվանսարայի տէրերը:

Երբ ճաշ էր պատուիրում, դուք զարմանում էք, երբ տեսնում էք թէ ինչքան աշխոյժ ու եռանդ է տիրում ամբողջ տան մէջ. ամեն մարդ եռանդով շարժւում է պատուէրը կատարելու բայց Պարսկաստանում մի երկար օր ճանապարհորդելուց յետոյ, մենք շատ երջանիկ ենք համարում մեզ, եթէ քարվանսարայում մենք կարողանում ենք մի փլաւ պատրաստել տալ և ուտել առանց նախապէս մեր խոհարարին ծեծելու: Սակայն ես այս էլ պիտի ասեմ, որ ինչպէս գիշերը յաջորդում է ցերեկին՝ այնպէս էլ մենք երբէք մի պատառ հաց չէինք ուտում, երբէք դէպի աջ կամ ձախ կողմը չէինք թեքում, երբէք մի քարվանսարայից դուրս չէինք գնում առանց կրելու Անգլիայի բալոր բաների անզերծանելի հետևանքը—այսինքն առանց հատուցանելու այդ որիլ կոչուածը, որ ներկայացւում էր մեզ:

Գլ. Ժէ.

Նրանք հասնում են բաթ եւ մօտենում են մայրաքաղաքին:—Հաշի Բարան նկարագրում է թէ անզիփական ընդունելութիւնը ինչ տպաւորութիւն է թողնում Միրզա Ֆիրուզի վրայ:

Հետևեալ օրը մենք նոյնքան ճանապարհ գնացինք ինչքան առաջին օրը: Մենք նոյնքան հանգիստ կերպով անցանք մի քանի մեծ քաղաքներից և տհսանք այնպիսի նոր ու զարմանա-

լի բաներ, որոնց մասին գրելու համար՝ հարկաւոր էր Շահի դրան ծառայող բոլոր միրզաների գրիչները:

Մենք յատկապէս մի քաղաքում սպասեցինք տեսնելու այն ինչ որ շատ անսովոր բան է երևում ֆրանկների մէջ— այսինքը բաղնիքը: Թաղաքն ինքը կոչում է Համմամ(րաղնիք) և մեզ շատ տարօրինակ թուաց, որ Փրանկներն այդքան նշանակութիւն էին տալիս մի քաղանիքի, որից կայ ամեն մի պարսկական դիւլում և մեր քաղաքների գրեթէ ամեն մի փողոցում ու ամեն մի պատուաւոր պարսիկի տանը:

Բայց թէ թնչու այդ Համմամը այդքան նշանակութիւն ունի. նրա համար, որ այդ տեղի ջրերը, ինչպէս Բրուսայինը որ գտնուում է Ստամբոլի մօտ, բուժիչ յատկութիւն ունին, և մենք շատ զուարձացանք տեսնելով այն հնարքները, որ գործ էին գրելում հիւանդներին առողջացնելու համար:

Դեսպանի ուսը ցաւում էր և նա գրանից բաւական նեղանում էր: Այն ֆրանկը որ մեզ ցոյց տուեց այդ հաստատութիւնը, ցոյց տուեց նաև մեզ անմաքուր գաղանի մազերից շինուած մի խոզակ, և ասաց, որ եթէ գրանով լաւ շփուէր ուսը, իսկոյն ցաւը կը կտրուէր:

Այս գործիքի (խոզանակի) տեսքը շատ սարսափեցրեց մեզ. կարծես թէ օձ տեսանք: Անհաւատը յետոյ հրաւիրեց մեզ մտնել մի լճակի մէջ, ուր շատ ֆրանկներ—մարդիկ ու կանայք—զուարձանում էին. բայց մենք արդէն մէկ անգամ բաւական պղծուել էինք խոզանակի տեսքից, և գրականապէս սերժեցինք կատարել նրա խնդիրքը:

Բաղնիքները թունդ վիճաբանութիւն յարուցին մեր և մէհմանդարի մէջ՝ անմաքը տեսանում ինդը մասին: Մենք պընդում էինք թէ պարսիկները ամենամաքուր ժողովուրդն են աշխարհում և ֆրանկները՝ ամենակեղտուած:

—Օրինակի համար դուք անգլիացիներդ, ասացի ես, հազիւ թէ երբեմից բաղնիք էք գնում: Դուք լուանում էք ձեր ձեռքերն ու ոտքերը և յետոյ ձեզ մաքուր էք համարում, այն ինչ Պարսկաստանում ամենահասարակ մարդը չէ կարող մէկ շարաթ անցկացնել առանց իր ամբողջ մարմինը լուանալու. հարուստ, նշանաւոր մարդիկը հօ ամեն օր են լողանում:

—Կարող է այդպէս լինել, ասաց մէհմանդարը. բայց ձեր մաքը ութիւնը միայն այնքան ժամանակ է տեսում, որքան դեռ ջրի մէջ էք, որովհնաւե երբ ջրի միջից գուրս էք գալիս, կրկին հագնում էք ձեր հանած կեղտուած շապիկը, որ շաբաթիներու ձեր հազին է եղել: Դուք հագնում էք ձեր վարտիկը, որ հօրից որդի է անցնում, հագնում էք ձեր ոչխարի մորթէ վերարկու-

ները, որ սերունդից սերունդ գործ էք ածում. իսկ մենք, մենք մեր սպիտակեղինը փոխում ենք ամեն օր. մեր մէջ ամենաաղքատ մարդը գոնէ շաբաթը մի անգամ գլախ մինչև ոտները լուանում, մաքրում է իրան:

—Ի՞նչ օգուտ ունի շորերով մաքրուր լինելը, ասացի ես, երբ նա պղծում է խողի միս ուտելով: Օրհնեալ Մարգարէին վկայ է, որ երբ մենք վերադառնանք Պարսկաստան, քսան տարուայ կրկնակի աղօթքն էլ չէ կարող սրբել մեզ այն ապականութիւնից, որով մենք հաւանականաբար կը վարակուենք ձեր մէջ ապրելով:

—Զուր մի խօսէք, ասաց նա, դուք սպասէք, և կը տեսնէք որ ինքներդ էլ աներկբայաբար կուտէք խողի միսը, նախքան գործներդ կը վերջացնէք մեզ հետ:

Նա գրեթէ ինձ հիւանդացրեց այդպիսի գարշութեան մասին խօսելով:

Մենք կրկին մտնելով մեր կառքերը, շարունակեցինք մեր ճանապարհը դէպի անզլիական մայրաքաղաքը:

Գիշերը մենք հասանք մեր հանգստատեղին, ուր դեպանին հանդիպեցան անզլիացըց Շահի Դոնից ուղարկուած երկու միրզաներ, որոնք եկել էին երկու կառքով և երկու թագաւորական սուրհանդակներով, և որոնց պատուիրուած էր ամեն բան պատրաստել նրա (դեսպանի) դիւրութեան և յարմարութեան համար: Նրանք արդէն մի սեղան էին պատրաստել, որի վրայ շարուած էին զանազան տեսակ կերակուրներ, պտուղներ և շաբաթներ, և հէնց որ գեսպանը կառքից իջաւ, նրանք իսկոյն հրաւիրեցին նրան սեղան նստել:

Մենք նկատեցինք որ Անգլիայի թագաւորի կողմից արած այս կարգադրութիւնը բաւական հաճոյացրեց դեսպանին, և յոյս ունեցանք որ հետևեալ առաւօտը մեզ էսթէլլրալ<sup>1)</sup> կը գային, որովհետև մեզ յայտնուեց որ միայն տասը ֆարսաղ էլ մնում էր մինչև հասնէինք քաղաքը, և որ մենք անտարակոյս կը հասնէինք այստեղ, նախ քան մուէզզինը<sup>2)</sup> միջօրէի աղօթքի կը հրաւիրէր հաւատացեալներին:

Այս լուրը մեզ ուրախ տրամադրութեան մէջ դրեց, Դեսպանը խորհրդակցեց Սէյխի հետ, թէ ինչ դաբա 3) հագնէր բաղաքը մուտ գործելիս, թէ ինչ շալ փաթաթէր գլախակի շուր-

1) Բնդառաջ:

2) Աղօթքի հրաւիրող մոլահ:

3) Հաբա՝ պարեգոտ, կապայ:

Ե. Բ.

Ե. Բ.

Ե. Բ.

զը, և հրամայեց որ իր ադամանդագարդ կոթ ունեցող դաշյնը պատրաստ պահուէր:

Շատ դէպքերում ես նկատել էի որ մեր թուխ երեսներն ու սե աչքերը անհաճոյ չէին երևացել անգլիացի աղջիկներին, ուստի ես հագայ միայն մի մաքուր շապիկ, որը ինչպէս նկատել էի, կարող էր մի մեծ անցագիր լինել անգլիացու հաւանութեանը հասնելու Ես պնդացրի գօտիս, և հագնելով իս լայն թեզանիքով վերարկոն՝ լայնացրի թիկունքս, որչափ կարելի էր:

Մենք բոլորս էլ հոգ տարանք լաւ որոշելու մեր գոլֆերը<sup>1)</sup> մեր ականջների ետևում: Սէյիդը գերծեց գեսպանի գըլուխը, իսկ ես իսս թողի մինչև հանդիպէինք սափրիչ Ֆէրէյ-գունին:

Զէրեզգուհին ամեն ժամանակից աւելի պինդ էր ծածկուել:

Թէպէտ մենք աստեղագէտ չունէինք մեղ հետ, որ մեղ ասէր թէ որն է բարեյաջող ժամը քաղաքը մտնելու համար, այնուամենայնիւ քանի որ գեսպանը նախորդ երեկոյին մի լաւ գուշակութիւն (օտեռ) էր ունեցել, մենք լիայոյս ու գոհ էինք որ մեր աստղը փայլում էր պայծառ:

Մենք մտանք մեղ համար պատրաստուած կառքը: Բաւական յուղուած էինք մտածելով թէ մեր ներկայ հանգամանքների ներքոյ քաղաք մուտ գործելու դէպքը ինչըան կարենոր պէտք է լինէր, և բոլորս պատրաստ էինք արդարութիւնաներու մեր Շահի պատուարժանութեանը: Դեսպանն ակնկալում էր որ իրան կը պատուէին էսթէէղբարով և մենք կասկած չունէինք, որ իրան կը պատուէին էսթէէղբարով և մենք էլ կասկած չունէինք, որ այդ պատիւը կը տրուէր նրան:

Դեսպանի հետ նոյն կառքը մտան երկու անգլիացի միրզաները, որոնց մենք ասացինք թէ այդպիսի դէպքերում պարսիկները որչափ ատարեր ձեռվ են մօտենում քաղաքին: Մենք հաւաստիացրինք նրանց որ մեր սովորութիւնն է այդպիսի հանդիսաւոր դէպքերում շատ դանդաղ շարժուել, շատ ծանր յառաջ գնալ—ինչ որ մեծ հանդիսաւորութիւն է տալիս, —յայտնեցինք որ մեծարանաց ճառեր են խօսւում, որ մենք ճանապարհին ծխում ենք, մեր շաթիրները<sup>2)</sup> վազում են մեր ձիերի առաջից, և, որ, մի գեսպանի՝ քաղաք մուտ գործելու ժամանակ՝ առատ ճիպոտներ են մատակարարւում ամբոխին, որպէս զի մարդիկ հիանան ոստիկանութեան աջալուրջ հսկողու-

1) Վարս, ականջների ետևի մազերը:

Մ. Բ.

2) Քազաւորի, իշխանի և ականաւոր անձանց առաջից վազող Փէրաշներ:

Մ. Բ.